2006, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (224)

Բիւզանդիայի Հայապան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավարտվեց Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական այցը Թուրքիա

Հունիսի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական անդրանիկ այցով մեկնեց Ստամբուլ:

Վեհափառ հայրապետին ուղեկցում էին Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արք. Մարտիկյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերսեդյանը, Գերմանիո հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արք. Բեբշյանը, Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կոնյանը, Տ. Վիգեն եպս. Այբազյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը եւ Տ. Վազգեն արդ. Նանյանը՝ որպես գավազանակիր:

Ստամբուլի օդանավակայանում պատվո սրահում, Նորին Սրբությանն ու շքախմբին դիմավորեցին Կ.Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը, Հայոց պատրիարքության բարձրաստիճան եկեղեցականներ, Հունաց Տիեզերական պատրիարքության երկու մետրոպոլիտներ, Թուրքիայում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանը, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ:

Պաշտոնական ընդունելության ընթացքում Մեսրոպ պատրիարքը ողջունեց Ամենայն հայոց հայրապետին եւ ուղեկից շքախմբի անդամներին՝ բարի գալուստ մաղթելով Ստամբուլ: Իր հերթին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը գոհություն հայտնեց Բարձրյալ Տիրոջը, Ով առիթ ընձեռեց իրեն հովվապետական անդրանիկ այցելությամբ լինելու Ստամբուլում, հանդիպելու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա օրհնությունը փոխանցելու պոլսաբնակ հավատավոր հայ ժողովրդին, ինչպես նաեւ եղբայրական փոխադարձ այցով լինելու Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Նորին Ամենասրբություն Բարթողոմեոս Ա-ի մոտ:

Հունիս 21-ին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Մեսրոպ պատրիարքի եւ շքախմբի, մեկնեց Հունաց Տիեզերական պատրիարքարան, ուր հունաց աթոռանիստ եկեղեցում մասնակցեց առավոտյան ժամերգության, որի ավարտին «Ուրախ լեր» շարականի երգեցողության ներքո առաջնորդվեց պատրիարքարանի գահասրահ:

Գահասրահում, ներկայությամբ Սուրբ Սինոդի անդամների, Նորին Սրբությանը դիմավորեց Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Նորին Սրբությունն Բարթողոմեոս Ա-ն: Երկու հայրապետերի եղբայրական ողջագուրումից հետո Բարթողոմեոս պատրիարքը բարիգալստյան պաշտոնական խոսքով դիմեց Վեհափառ հայրապետին:

Ապա Տիեզերական պատրիարքին տերունապարգեւ խաղաղության եւ սիրո իր ողջույնն ուղղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը: **«...Մեր երջանկաիշատակ նախորդներն այցելել են Ձերդ Ամենասրբության ու Ձեր երջանկաիշատակ նախորդներին: Այսօր Մենք ենք այցելում Ձեզ՝ ուրախ սրտով ու եղբայրական սիրով: Մենք այցելում ենք մի ժողովրդի ու Եկեղեցու, որ բաժնեկից է Մեզ Քրիստոսի ժառանգությամբ, Նրա վկայությամբ ու Նրա սիրով: Մենք այցելում ենք մի Եկեղեցի, որի հետ կիսել ենք պատմությունը ձեռքբերումների ու արարումների, հալածանքների, տառապանքների եւ նահատակության, աղոթքի ու վկայության, որ արթուն է այսօր մեր սրտերում ու մտքերում: Մենք այցելում ենք մի Եկեղեցի, որ իր հարուստ անցյալով ու ներկայով շարունակում է Տիրոջ վկայությունը՝ սիրով ու խաղաղությամբ:**

Ձերդ Ամենասրբությանն այցելելով՝ վստահությունն ունենք, որ մեր աղոթքների ու զրույցների, մեր հանդիպումների ընթացքում պիտի կարողանանք վայելել Քրիստոսի սիրո ու եղբայրության պարգեւները, որ պիտի փոխանցենք որպես օրինություն՝ հավատավոր մեր զավակներին»,- ասաց Նորին Սրբությունը՝ վերհիշելով Տիեզերական պատրիարքի պատմական եւ հիշարժան այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունների շրջանակում 2001 թ. նոյեմբերին:

Ամենայն հայոց կաթողիկոսն աղոթք վերառաքեց առ Աստված, որ Հավիտենական Լույսից բխող խաղաղությունը լուսավորի ու ջերմացնի ամենքի հոգիներն ու սրտերը՝ նպաստելով մեր հավատքի վկայության զորացմանը՝ ի խնդիր ժողովուրդների ու ազգերի, կրոնների ու եկեղեցիների միջեւ խաղաղության, հաշտության ու բարեկամության ամրապնդման՝ հիմնված արդարության ու ճշմարտության անանց սկզբունքների վրա: Վեհափառը մաղթեց, որ Տիրոջ օրհնությամբ եւ հովանու ներքո երկու Եկեղեցիների միջեւ առկա հիմնագործակցությունն առավել պտղաբերի՝ ի սեր եւ ի պայծառություն Քրիստոսի Եկեղեցու եւ նրա հանապազ զորացման:

Հունիսի 22-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը, Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Նորին Սրբություն Բարթողոմեոս Ա-ն եւ Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը մեկնեցին Մարմարա ծովում գտնվող Հեյպել կղզին, ուր այցելեցին Սուրբ Երրորդություն հույն ուղղափառ վանքը եւ Տիեզերական պատրիարքության հայանի աստվածաբանական ճեմարանը:

Վանքի մետրոպոլիտ վանահայրն ուրախությամբ ողջունեց բարձրաստիճան հյուրերին՝ նշելով, որ Հեյպել կղզու բնակիչները եւ եկեղեցականները մեծ հարգանքով, խանդավառությամբ ու սիրով են ողջունում Ամենայն հայոց կաթողիկոսին: Վանահայրը հաստատեց, որ Հայոց հայրապետի այցը վկայությունն է Ստամբուլի հայ եւ հույն համայնքների միջեւ առկա ջերմ եղբայրության ու սիրո շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը պատվավոր այցելության համար:

Շարունակությունը՝ հաջորդվածում

Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց ՌԴ Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչին

Հունիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Դմիտրի Կոզակի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի:

Ողջունելով Դ. Կոզակի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր եղբայրական հարաբերությունների զարգացման առիթով՝ հաստատելով, որ հարկ է դրանք սրբությամբ պահպանել եւ առավել ամրապնդել: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաեւ Հարավային դաշնային օկրուգի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող խնամքի եւ ուշադրության համար:

Իր հերթին՝ ՌԴ Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Դմիտրի Կոզակը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար եւ բարձր գնահատեց մասնավորապես Ռուսաստանի Հարավային շրջանում բնակվող հայ համայնքի կառուցողական գործունեությունը, որը կարեւոր դեր է խաղում Ռուսաստանի տնտեսական եւ մշակութային կյանքում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ վերջերս Ռուսաստանում տեղ գտած սպանություններին, որոնց զոհ էին դարձել մեր հայրենակիցները: Նշվեց, որ նման երեւույթները չեն բխում հայ եւ ռուս ժողովուրդների եւ երկու պետությունների շահերից ու բարեկամական ջերմ հարաբերություններից:

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006-ի թիվ 1-5, 11

Հունվարի 13-ին Քրիստոսի անվանակոչության տոնն է: Ըստ հրեական օրենքի՝ նորածին երեխային ութերորդ օրը թլփատում էին եւ անուն դնում: Սա քրիստոնեական մկրտության արարողության նախօրինակն էր կամ ստվերը: Այս մասին մանրամասն բացատրվում է «Կանոնագիրք Հայոց»-ի առաքելական 13-րդ կանոնում: Քրիստոսի առաքյալների հաստատած կանոնը հորդորում է, որ երեխային ութ օրական հասակում պետք է մկրտել, ինչպես որ Աստված Աբրահամին պատվիրեց երեխային ութ օրականում թլփատել՝ որպես հավիտենական ուխտի նշան: Սա, ինչպես ասվեց, մկրտության նախօրինակն էր: Բացի դրանից, Թվոց գրքում՝ 19-րդ գլխում, խոսվում է մեղքերի մաքրման ջրի մասին, որը պետք է հեղեին անմաքուր մարդու վրա: Սա կանխագուշակումն էր հեթանոսների մկրտության: Մկրտության այլ ակնարկներ եւս տեսնում ենք Հին Կտակարանում: Բերվող օրինակները նույնպես զետեղված են երեխային ութ օրական հասակում մկրտելու վերաբերյալ առաքյալների հաստատած կանոնի մեջ. «Հեսուն անցավ Հորդանան գետը եւ ջրով անցնելուց հետո մտավ Պարգեւների երկիր: Եղիան եւս անցավ Հորդանանը եւ երկինք ելավ: Հովհաննեսը եւս Քրիստոսին մկրտեց ջրի մեջ, ինչպես նաեւ իսրայելացիները ջրով անցնելով՝ փրկվեցին փարավոնից»: Այսպիսին է նաեւ մկրտության խորհուրդը:



ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Ավանդության՝ երեք տարին լրանալուց հետո Սուրբ Մարիամը ընծայվում է տաճարին, ուր մնում է մինչեւ իր նշանվելը: Այս տոնի հաստատումը կապված է Հուստինիանոս կայսեր կողմից Զ դարում Աստվածածնի պատվին հրեական տաճարի տեղում քրիստոնեական տաճարի կառուցման հետ: Այդ տաճարը հետագայում վերածվեց մուսուլմանական մզկիթի: Աստվածածնի՝ տաճարին ընծայման տոնը Հայ Եկեղեցի մուտք գործեց 18-րդ դարում: Այժմ բոլոր Եկեղեցիներն այն տոնում են նոյեմբերի 21-ին: Հրեաների սովորությունն էր նաեւ 40 օրական առաջին տղա երեխային տաճարին ընծայելը: Երբ Եգիպտոսում մեռան բոլոր անդրանիկ զավակները, Աստծո զորությամբ հրեաների երեխաներին ոչինչ չպատահեց, այդ իսկ պատճառով այդուհետ բոլոր անդրանիկ արու զավակները համարվում էին Աստծո սեփականությունը: Հետագայում անդրանիկ զավակների փոխարեն տաճարում սպասավորություն անելու համար ընտրվեց Ղեւիի ցեղը, իսկ մյուսները կարող էին փրկագնվել տաճարին զոհաբերվող գառով եւ ընծայով: Քրիստոնեության մեջ եւս 40 օրական երեխայի ընծայման շատ գեղեցիկ կարգ կա, որը կատարվում է արդեն մկրտված երեխայի վրա. հոգեւորականն աղոթքներով Աստծո օրհնությունն է խնդրում հատկապես մոր եւ մանկան համար: Ի տարբերություն բողոքականների-ավետարանականների՝ մենք հավատում ենք, որ մկրտությունը Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է: Մեր Եկեղեցում հիշատակվող սրբերից Անդրե զորավարն ու իր զինվորները նահատակվեցին հենց մկրտության գնալու պատճառով: Մկրտությունը չի կարելի երկրորդ անգամ կատարել, սակայն Սուրբ Եկեղեցին մկրտում է բողոքականությունից կամ այլ աղանդներից դարձի եկողներին, որովհետեւ առաքելահիմն Եկեղեցին չի կարող վավերական համարել այն մկրտությունը, որը չի կատարել հոգեւորականը: Իսկ բողոքականները որոշ աղանդների նման ընդհանրապես չեն ընդունում քահանայությունը: Բացի դրանից, բողոքականները չեն հավատում, որ մկրտությունն արժանացնում է կյանքի նորոգության, մեղքերի թողության, փրկության եւ արդարության, քանի որ նրանք փրկության առաջնային պայման են համարում հավատքը: Սակայն իրականում առանց մկրտության մարդ չի կարող փրկվել, ինչպես Քրիստոսն ասաց Նիկոդեմոսին. «Եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել» (Հովհ. 3.5): Չնայած, որ Պողոս առաքյալը Քրիստոսի կողմից ընտրվեց, սակայն նրա մեղքերը չներվեցին միայն Քրիստոսի հետ հանդիպմամբ: Հիշենք, թե հետո ինչ ասաց նրան Անանիան. «Եվ արդ ինչո՞ւ ես դանդաղում. ելի՛ր, մկրտվի՛ր եւ լվացվի՛ր մեղքերիցդ» (Գործք 22.16): Այստեղ տեսնում ենք, որ մկրտության ներգործություններից մեկը մարդուն մեղքերից մաքրելն է: Երբ հոգեգալստյան օրը բազմաթիվ հրեաներ հավատացին Քրիստոսին՝ առաքյալներին հարցրին. «Ի՞նչ պիտի անենք, եղբայրնե՛ր»: Պետրոսն ու մյուս առաքյալները պատասխանեցին. «Ապաշխարե՛ք, եւ թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ, մեղքերի թողության համար» (Գործք 2.37-38): Առաքյալները, հավատքից բացի, առաջին հերթին կարեւորեցին մկրտությունը: Իսկ ինչո՞ւ է մարդը, որ մկրտությամբ Սուրբ Հոգին էր ստացել, այսինքն՝ արժանացել էր Սուրբ Հոգու շնորհներին, շարունակում մեղանչել: Պատճառն այն է, որ մկրտությունը կյանքի նորոգություն է տալիս, ինչպես ասում է Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված թղթում (Հռոմ. Զ 4), բայց այն չի շնորհում անմեղանչականություն:

Շարունակությունը՝ էջ 4

Գեւորգ Զ. ՉՈՐԵՔՉՅԱՆ

Կաթողիկոս Ամենայն Հայոց (ծն. 1868, կթղ. 1945-1954)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

(Սբ Էջմիածնի տօն)

«Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի»
(Մատթ. ԺԵ 24)

Նեղ հայեացք է, այնպէս չէ՞. ազգայնական հովեր են փչում: Ո՞ւր է համամարդկայինը, համաշխարհայինը:

Փրկչի համամարդկային սիրով լցուած սիրտն անգամ մարդկային բնական զգացմունքից՝ հայրենասիրութիւնից, զերծ չէ: Նա, որ գիտէր, թէ աշխարհի Փրկիչ է, թէ Իւր աւետարանը բոլոր ազգերին պիտի քարոզուի, այնուամենայնիւ, քանի որ ապրեց երկրի վրայ, հայրենի երկրի սահմաններից չելաւ, քանանացի կնոջը պատասխանեց, թէ՝ «Ուղարկուած եմ Իսրայէլի տան կորուսեալ ոչխարների համար». որովհետեւ Իսրայէլի ժողովրդի ծնունդ էր, նրան էր պատկանում Իւր կեանքը. այդ ժողովրդի համար մաշուեցաւ, նրան զոհուեցաւ:

Ինչի՞ մասին կարող էի խօսել մի ժողովրդի հետ, որ հայրենի հողից կտրուած, օտար երկնքի տակ, օտար հողի եւ ջրի ապաւինած՝ ծուարել է հայրենիքի կարօտը սրտում, եթէ ոչ՝ հայրենիքի մասին:

Ներկայ վէճերի ու կռիւների շրջանում, որոնք բաժան-բաժան են անում հայ ժողովուրդը, դառնացնում նոցա զգացմունքները դէպի միմեանց յանուն կուսակցական պայքարի, ես խաղաղութեան խօսք պիտի ասեմ այսօր, հայրենիքի մասին պիտի խօսեմ, որ ամէն կուսակցութիւններից բարձր է եւ պիտի լինի, եւ որին պիտի ծառայեն բոլոր կուսակցութիւնները:

Երկու հայրենիք ունի հայն աշխարհի մէջ. մէկը՝ Մայր Ռուսիան, որ 1828 թուից իւր յաղթական զէնքի ոյժով նուաճեց Արարատեան դաշտը եւ մեզ ազատելով պարսից կամայական կառավարութիւնից, որի իշխանութեան ներքոյ օր օրի վրայ հիւծւում, նուազում եւ գերեզմանին էինք մօտենում, տուաւ նոր շունչ, նոր կենսունակ նիւթ, այն է՝ իւր գիտութեան լոյսը եւ ազատ զարգացում, որի շնորհիւ երեկոյեան թարշամած ծաղիկը ինչպէս առաւօտեան ցօղով եւ արեւով կրկին կեանք է առնում, կեանք առաւ նաեւ հայն ու զուարթացաւ: Երկրորդը մեր մայր հայրենիքն է՝ մեր ծնողը:

Հայրենի՛ք. ի՞նչ քաղցր է հնչում մեր ականջին: Այս այն գաղափարն է, որ մեր ազգի բոլոր անհատներին եւ բազմատեսակ տոհմերին միացրել է՝ դարձնելով նոցա մի ժողովուրդ՝ մի բազմանդամ ընտանիք, որոնց երակներում միեւնոյն արիւնն է հոսում, որոնց բերանում միեւնոյն մայրենի բարբառն է հնչում, եւ որոնց ո՛չ կարիքը եւ ո՛չ վտանգը կարող է բաժանել:

Հայրենի՛ք. նա մեզ յիշեցնում է, որ մեր ազգի բախտն ու պատմութիւնը սերտ կապուած է այն երկրի հետ, ուր ապրել եւ ապրում է նա, որ ռոգուած է մեր պապերի արիւնով անցեալ պատերազմների, մարտիրոսութիւնների եւ ներկայ հալածանքների շնորհիւ. որ պահում է անթիւ ու անհամար շէն գիւղերի եւ փարթամ քաղաքների փլատակներ ու աւերակներ. ուր թափուել են վշտի ու ծանակի աղի արցունքներ, ուր հնչել են երբեմն նաեւ խրախճանաց եւ յաղթութեանց ուրախ երգեր: Նա մեր կեանքի որրանն է, ուր օրօրուել է մեր օրօցը, ուր հիմնուել է մեր սեփական օջախը, որ ամփոփել է իւր ծոցում մեր սիրելիներին՝ մեզ համար ամենաթանկագին էակներին, եւ որ պիտի լինի նաեւ մեր վերջին հանգստեան վայրը: Ո՞վ է այն հայ մարդը, որ գիտակցէ այս բոլորը եւ իւր սիրտը նրան չնուիրէ. ո՞վ է այն հայ դժբախտ ուսուցիչը, որ այս բոլորը գիտակցէ եւ համարձակուի իւր սաներին մաքուր կաթի փոխարէն քար տալ. ո՞վ է այն ապերախտ հոգեւորականը, որ համարձակուի իւր խնկելի նախորդների՝ Սբ Ղեւոնդեանց քահանայից յիշատակը ոտնահարել ու արհամարհել:

Հայրենի՛ք. մեր ազգի կեանքը երէկ չէ սկսուած, նա հետաքրքրական պատմութիւն ունի իւր յետեւում. 2-3 հազար տարի է՝ գոյութիւն ունինք, եւ մեր ազգի բախտը այդ երկար շրջանում միշտ փոփոխական է եղել. երբեմն դէպի առաջ եւ երբեմն դէպի յետ: Բայց միշտ ունեցել է միեւնոյն ճակատագիրը, միեւնոյն վիշտն ու ուրախութիւնն է, որ բաժին է ընկել ամբողջութեան: Նրա երկու-երեք հազար տարուայ պատմութիւնը աղաղակում է, որ մենք է՛ւ բախտի, է՛ւ անբախտութեան օրերին միասին ենք եղել. պէտք է ուրեմն այժմ էլ միասին լինինք. միասին խորհենք, միասին գործենք, միասին քննենք դժգոհութեան շարժառիթները եւ միասին խորհենք համայնական երջանկութեան մասին:

Մեր ազգի գոյութեան, նրա մեծութեան, նրա փառքի եւ նրա բարեկեցութեան համար շատ սերունդներ են մաքառել եւ տանջուել: Մենք ժառանգներն ենք այն բոլորի, որ մեր պապերի ջանասիրութիւնը, անձնուիրութիւնը, նոցա հերոսական ոգին ձեռք է բերել: Ես հաւատում եմ, որ կռուով ու վէճով մենք չենք ոչնչացնի այն, ինչ որ մեր հայրերը մեզ աւանդ են թողել, այլ մենք նոյն հիմքի վրայ կը շարունակենք շէնքի կառուցումը: Այս բարոյական պարտականութիւնը կախուած պիտի լինի բոլորիս վրայ իբրեւ դամոկլեան սուր:

Հայրենի՛ք. ի՞նչ խոր ազդեցութիւն ունիս դու զգացող սրտերի վրայ: Այո՛, դու բնութեամբ հարուստ ես եւ գեղեցիկ, բայց եթէ լինէիր դաժան եւ անհիւրընկալ, այն ժամանակ էլ քեզ փոխարինող չէր լինի մեզ համար, որովհետեւ անքակտելի կապերով կապուած են մեր սրտերը քեզ հետ, եւ մի ներքին զգացում՝ հայրենի կարօտը, ստիպում է մեզ ձգել ամէն ինչ՝ է՛ւ փառք, է՛ւ բախտ օտարութեան մէջ եւ դառնալ երկիր:

Դու հասցրել ես մի ժողովուրդ, հայ ժողովուրդ, որ իւր պատմական բախտի հետեւանք բոլոր պակասութիւններով հանդերձ, կրթութեան ենթարկուելով, ցոյց է տալիս առաջինութիւններ, որոնք վկայում են, թէ մեծ ժողովրդի զաւակ է եղել, եւ եթէ հանգամանքները փոխուեն, ընդունակ դառնալու իւր նախատիպին:

Այսօր այլեւս չկայ հայրենիքը որպէս ֆիզիքական ոյժ, կայ միայն գաղափարը իբրեւ բարոյական ոյժ, որ վառ պահում է մեր մէջ Հայոց Եկեղեցին: Այսօր նրան փոխարինողը Հայոց Եկեղեցին է, որի զօրաւոր թեւերի տակ ծուարել է հայութիւնը անխռով:

Շարունակութիւնը՝ էջ 4

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

(1066-1105)

Սկիզբը՝ թիվ 4-6, 8-11

Բարսեղ կաթողիկոսի վերաբերյալ տեղեկությունները 1093 թվին Անիից վերադառնալուց հետո գործնականում բացակայում են: Ինչքանով է նա հարաբերվել խաչակիրների հետ, մեզ հայտնի չէ, սակայն ենթադրել, թե նա նրանց հետ ինչ-ինչ առնչություններ չի ունեցել, պարզապես ճիշտ չէ: Հավանական է, որ նա չէր կարող հարաբերություններ չունենալ արեւմտյան հայերի հետ: Սնկի պես աճած կաթողիկոսությունները վերացել էին, եւ նա էր այժմ Վկայասեր կաթողիկոսի հետ միայն ներկայացնում Հայոց Եկեղեցին: Հետեւաբար, կամա թե ակամա, նա պետք է զբաղվեր Հայոց Եկեղեցուն հուզող այլեւայլ խնդիրներով: Հայտնի է, որ նա բանադրեց այսպես կոչված Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի եղբորը, որը կաթողիկոսական աթոռ էր բարձրացել եղբոր մահից հետո: Նրա վճռին ենթարկվեցին Հայոց Արեւելից կողմերի բնակիչները եւ նրան գահընկեց արեցին:

Անիից վերադառնալուց հետո նա նույն 1103 թվին իրեն ուղեկցող եպիսկոպոսների, քահանաների, ազատների եւ այլ պաշտոնյաների հետ հովվական շրջայց ձեռնարկեց Եդեսիա, որտեղ կոմս էր Դ'Բորկ Բոլդվինը: Հայոց կաթողիկոսն արժանացավ կոմսի պատվավոր ընդունելությանը, ինչպես նաեւ որպես ընծա ստացավ բազմաթիվ նվերներ ու գյուղեր: Դժվար չէ տեսնել, որ Եդեսիայի կոմսը ճանաչում էր հայոց կաթողիկոսի հոգեւոր իշխանությունն իր հայ հպատակների վրա: Այնուհետեւ նա անցավ Գերմանիկե կամ Մարաշ, որտեղ հաստատվել էր լատին իշխան Ջոսլինը: Քաղաքի նախկին կուսակալ Թաթուլը, զրկվելով իր երկրամասից, Տիրամոր պատկերը չէր թողել լատիններին, այլ վաճառել էր Անարզաբայի Թորոս իշխանին, որն այն զետեղեց իր կառուցած Ջորավարաց տաճարում: Բարսեղն այցելեց նաեւ Քեսուն եւ հանդիպեց հայոց Վկայասեր կաթողիկոսին, որը ստիպված էր եղել լքել Սեւ լեռների շրջանը եւ հաստատվել Քեսունից ոչ շատ հեռու գտնվող Կարմիր վանքում: Նրա այցելությունները շարունակվեցին դրանից հետո էլ, սակայն հայտնի չէ, թե նա եղավ Անտիոքում, Կոպիտառում կամ Լամբրոնում: Ինչեւէ, այցելությունները դադարեցնելով՝ նա վերադարձավ Անի: Այդ ժամանակ Ղզըլ անունով մի թուրք ամիրա գրավել էր Դվինը եւ սպանել Աբու-Նասր ամիրային: Դրանից անհանգստացած՝ Անիի ամիրա Մանուչեն զորք հավաքեց՝ եղբոր վրեժը լուծելու համար: Զորքի քանակը մեծացնելու համար նա անգամ գնաց Պարսկաստան: Եդեսիայի կոմս Բոլդվինը եւ Գերմանիկեի Ջոսլինը փորձեցին գրավել Խառանը, սակայն հաղթվեցին եւ գերի ընկան: Նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու համար Անտիոքի Բոհեմոնդ դուքսը, իշխանությունը հանձնելով իր քեռորդի Տանկրեդին, Եվրոպա մեկնեց, մահացավ Բարկիարուխ սուլթանը, եւ ուժեղացավ նրա եղբայր Մուհամմեդը: Այս ամենը ստիպեց Բարսեղին 1105 թ. սկզբներին վերադառնալ Անի: Սակայն այստեղ նրան անակնկալ էր սպասվում: Հազիվ էր նա Անի վերադարձել, երբ Վկայասեր կաթողիկոսից լուր ստացավ, որ նա մահամերձ է: Վկայասերը շրջապատված էր Գող Վասիլի եւ նրա շրջապատի հոգածությամբ, սակայն հայոց հայրապետը, զգալով իր մոտալուտ մահը, կանչում է Բարսեղին, որ նա իրեն հողին հանձնի: Բարսեղն անմիջապես ճամփա է ընկնում եւ Բալուից ոչ հեռու՝ Մեծկերտ բերդի մոտ, ենթարկվում է սելջուկյան սուլթանության զորքերի հարձակմանը: Բարսեղը քաջարի դիմադրեց նրանց հարձակմանը եւ իր կամքով ինչ-որ գումար վճարելով՝ անփորձանք ժամանեց Կարմիր վանք, որտեղ Վկայասերին գտավ դեռեւս ողջ: Հայոց կաթողիկոսը, իր մոտ հրավիրելով Բարսեղին եւ Գող Վասիլ իշխանին, նրանց ներկայացնում է իր քրոջ որդի Գրիգորին, որին անվանում է Հայոց կաթողիկոս, այլ խոսքով՝ նրան դարձնում է իր հաջորդը: Սակայն դա ոչինչ չէր նշանակում: Շուտով պատահական արկածի զոհ դարձավ Բարսեղ կաթողիկոսը, եւ 12 տարեկան պատանին բարձրացվեց կաթողիկոսական աթոռ: Հիշյալ Գրիգորիսը կամ Գրիգորը Ապիրատ զորավարի որդին էր, որն էլ իր հերթին Ծովքի իշխանի եւ Գրիգոր Մագիստրոսի չորրորդ դստեր որդին էր: Գրիգորը Վկայասեր կաթողիկոսի կրտսեր քրոջ թոռն էր:

Գրիգոր Վկայասերը, ինչպես հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին, մահացավ տրե ամսին՝ ամռան աղուհացի առաջին շաբաթվա շաբաթ օրը: 1105 թվին այն համապատասխանում էր հունիսի 3-ին, իսկ հայկական տոմարով՝ 554 թվականի տրե ամսի 11-ին՝ համաձայն շարժական տոմարի: Գրիգոր Վկայասերը հողին հանձնվեց Քեսունի Կարմիր վանքում: Նա ապրեց հավանաբար 80 տարուց ավելի:

Վերլուծելով Գրիգոր Վկայասերի գործունեությունը՝ Մ. Օրմանյանը նրան իրավամբ համարում է ամենագովելի դեմքերից մեկը Հայոց Եկեղեցու պատմության մեջ: Պատահական չէ, որ պատմիչները նրան ճանաչում են որպես հայաստանյան դավանության սյուն եւ Արեւելից տան Եկեղեցու պարիսպ: Նա մեծ հռչակ ձեռք բերեց իր գրական զբաղմունքներով եւ ի հակադրություն Գրիգոր Նարեկացու դիզաբարդյալ եւ Գրիգոր Մագիստրոսի անընտել ոճի, նախահայրը դարձավ մի նոր ոճի, որին պիտի հետեւեին Շնորհալիները, Լամբրոնացիները եւ Սարգիսները: Ցավոք, սակայն, նրա անունով մակագրյալ գործեր մեզ չեն հասել, եւ դժվար է դրանց պատճառները նշել: Մ. Օրմանյանն այդ առիթով նրան համեմատում է սուրբ Մաշտոցի հետ, որի անունով փաստորեն մեզ հասած աշխատություններ չեն պահպանվել:

Երբ մենք անդրադառնում ենք նրա հովվապետական գործունեությանը, չենք կարող չարձանագրել, որ իր բոլոր արժանիքներով հանդերձ՝ նրա օրոք կաթողիկոսական իշխանությունը ձեռնթափ էր եւ անգործունյա, որը ցավոք ընդարձակ դաշտ էր բացում Եկեղեցիների միության կողմնակիցների համար: Ճիշտ է, նա կաթողիկոս դարձավ ինչ-որ տեղ հարկադրյալ եւ անվանական, սակայն, այնուամենայնիվ, ստանձնելով այդ պաշտոնը՝ նա որոշակի պարտավորություններ էր վերցնում իր վրա եւ իր անգործունյա վիճակը չէր կարող արդարացնել իր անվանական կաթողիկոսությամբ: Եթե նա այդպիսի վարքագիծ հանդես չբերեր, չէին հայտնվի վերը հիշված վեց եւ ավելի կաթողիկոսությունները: Ըստ որում, վիճակն ավելի ծանր կլիներ, եթե նրա պաշտոնակիցը չդառնար Բարսեղ Պահլավունին: Այդ հարցում էլ նա նախաձեռնողի դերում չեղավ, այլ՝ դեպքերին հետեւողի: Եթե Բարսեղի գործունեությունը չլիներ, որի արդյունքում հակաթոռ շատ կաթողիկոսություններ վերացան, Գրիգոր Վկայասերի գործունեությունը մեզ կներկայանար բավական մռայլ գույներով:

Ստանալով հունական փայլուն կրթություն, ծառայելով բյուզանդական կայսրությանը, անտարակույս է, որ նա ունեցել է որոշակի հունասիրություն եւ բյուզանդամետություն, որոնք անշուշտ արտահայտվելու էին նրա կաթողիկոսության շրջանում: Սակայն հարկադրված ենք արձանագրելու, որ լինելով հունասեր՝ նա երբեք հունամոլ չդարձավ: Ավելին, ենթարկվելով տարբեր տեսակի հալածանքների՝ նա երբեք երկու Եկեղեցիների միության խնդիր առաջ չքաշեց: Նա կամենում էր հույների հետ մտերմությամբ ուժեղացնել հայությունը եւ ոչ թե զոհաբերել այն: Նա երբեք չգնաց քայլերի, որոնք կփոփոխեին հայոց դավանությունը, կհպատակեցնեին Հայոց Եկեղեցին Բյուզանդականին, կասկածի տակ կառնեին հայ ինքնությունը: Ավելին, նա համարձակություն ունեցավ կշեռքի մի նժարի վրա դնել այլահավատների եւ խաչակիրների հակահայ գործունեությունը: Եվ եթե նա սկզբում ողջունում էր խաչակիրների Արեւելք գալը, ապա ավելի ուշ մերկացնում էր նրանց կեցվածքը, երբ ուժեղանալով աշխատում էին ծնկի բերել եւ իրենց ենթարկել երբեմնի դաշնակիցներին: Եթե անգամ նա ինչ-որ չափով կողմ է եղել Եկեղեցիների միությանը, ապա նրա ձգտումները օրինավոր եւ արդարացված սահմանագծից այն կողմ չեն անցել: Նա եղել է հայ ինքնագլուխ Եկեղեցու իրավունքների պաշտպանը:

Շարունակությունը՝ էջ 5

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ
(ԺԳ դար)

ԽՐԱՏ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

«Աստված սեր է, - ասում է որոտման որդին՝ Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսը, - եւ ով սիրո մեջ է գտնվում, բնակվում է Աստծո մեջ, եւ Աստված՝ նրա մեջ»:

Եվ արդ, եղբայրնե՛ր, լսեցե՛ք եւ մտապահեցե՛ք սիրո այս ճառը: Քանզի ամեն ոք, ով սիրում է Աստծուն, սիրում է նաեւ իր եղբորը: Քանզի Աստծո [հանդեպ] սերը երեւում է եղբոր [հանդեպ] սիրով: Քանզի եթե եղբորդ, որին տեսնում ես, չես սիրում, ապա՝ Աստծուն, որին չես տեսնում, ինչպե՞ս կկարողանաս սիրել: Եթե սիրում ենք մեր եղբորը՝ հոգեւոր սիրով եւ ո՛չ՝ մարմնավոր, սրանով էլ իմանում ենք, որ սիրում ենք Աստծուն: Քանզի այլ է հոգեւոր սերը եւ այլ է մարմնավորը, ինչի մասին կասենք ընթացքում:

Իսկ այժմ՝ ամեն ոք, ով սիրում է, ճանաչվում է Աստծուց, եւ ինքն էլ ճանաչում է Աստծուն: Եվ ամեն ոք, ով չի սիրում իր եղբորը ցավակցաբար, օտար է Աստծուն եւ չի կարող ընդունել աստվածային շնորհները: Ամեն ոք, ով սուրբ սրտով սիրում է իր եղբորը, դառնում է Աստծո բնակարան, եւ Աստված բնակվում է նրա մեջ: Քանզի Տերն Ինքը սիրեց մեզ եւ առաքեց ճշմարտության Հոգուն՝ բնակվելու մեր մեջ: Քանզի մեր իմանալի հոգին սիրո՛վ է կապվում Աստծո անիմանալի Հոգու հետ: Եվ ինչպես Նա սիրեց մեզ, նույնպես եւ կամենում է, որ մենք սիրենք միմյանց:

Տե՛ս, թե սերն առ Աստված որքա՜ն համարձակություն ունի. ասես թե մարդուն դարձնում է Աստծո նման, քանզի Աստված Իր սիրով եղավ մարդկանց նման: Եվ ցույց տվեց, թե մարդիկ իրենց սիրով լինելու են

րեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդուն առաքեց՝ ի փրկություն աշխարհի:

Եթե մենք սիրենք միմյանց, ինչպես որ Աստված սիրեց մեզ՝ ոչինչ է չարը, որ խափանի մեր սերը: Ամեն ոք, ով սիրում է, հայտնի է դառնում մարդկանց առաջ եւ համարձակ՝ Աստծո առաջ: Քանզի մահացու մեղքերից երկյուղ չունի, այլ զինված է Աստծո սիրով եւ անահ բոլոր երկյուղական վտանգներից:

Ուր սեր կա, այնտեղ երկյուղ չկա, ինչպես ասում է Հովհաննեսը՝ սիրո մեջ երկյուղ գոյություն չունի, այլ՝ կատարյալ սերը բացեիբաց մերժում է երկյուղը, քանզի երկյուղը տանջանքներից է, իսկ սերը՝ համարձակությունից: Նաեւ՝ քանզի երկյուղը հալածվում է սիրուց, եւ ուր սեր չկա, այնտեղ դատաստանի երկյուղն է եւ կորստյան ահը՝ մեծ ու ահեղ ատյանի օրվա:

Իսկ սերը մարդուն բոլոր տանջանքներից աներկյուղ է դարձնում: Այն սերն ի նկատի ունեմ, որ ամենեւին հեռու է երկրայնությունից, քանզի երկրայնությունն ու սերը միասին չեն բնակվում: Եվ հայտնի է, որ սերը ոչ միայն հավիտենական կյանքում է իր խաղաղության պտուղը բերում, այլեւ այս աշխարհում ազատորեն հալածում է ամենայն թշնամություն, նախանձ եւ ատելություն, ոխակալություն եւ չարակամություն, չարախոսություն եւ հայհոյություն, տրտունջ եւ բամբասանք, հպարտություն եւ ինքնահավանություն եւ, մանավանդ, բոլոր չարիքների մայր արծաթասիրությունն ու ագահությունը:

Արդ, ով սեր ունի, ազատորեն հեռանում է այս ամեն չարիքից եւ ժամանում երկնային, հանդարտ, խաղաղ ու ամբողջովին բարի նավահանգիստ: Ի՞նչն է խաղաղական, քան սերը. ազատ լինելը ամեն մի խռովությունից եւ Աստծուն հաճելին կատարել:

Սերը երկնքի արքայության բանալին է եւ հավիտենական կյանքի ճանապարհը:

Սերը մարդկանց դարձնում է Աստծո որդիներ եւ երկնքի արքայության ժառանգորդ:

Սերը մեր ապականացու բնությունը վերածում է անապականի, իսկ մեր մահկանացու [բնությունը] վերափոխում անմահության:

Սերը երկրայիններին զորացնում է, իսկ հողեղեններին՝ զարդարում հրեղենով:

Եվ արդ, ո՞վ կարող է պատմել սիրո անչափ մեծության մասին, որ անճառ է եւ անպատում: Ըստ որում, [ինչպես] անքննելի է աստվածության անեղ բնությունը, այնպես եւ՝ սիրո բնությունը: Եվ ինչպես Աստված անբավ է, բայց մերձ է ամենքին եւ բնակվում է հեզերի ու խոնարհների մեջ, նաեւ նրանց մեջ, ովքեր դողում են Նրա խոսքերից, այնպես եւ սերն է մերձ ամենքին, ովքեր կամենում են այն: Եվ նա գալով կբնակվի իրեն փնտրողների մեջ, քանզի սերը սիրում է իր սիրելիներին եւ ատում՝ իր ատելիներին: Ովքեր փնտրում են նրան, Աստծո պես մերձ է նրանց, քանզի Աստված սեր է եւ սիրո կամեցող՝ [բխած] սուրբ սրտից եւ անկեղծ հավատքից:

Գրաբարից փոխադրեց
Արմեն դպիր ԽԱՉԱՏՐՅԱՆԸ
Գեւորգյան հոգեւոր ճեմարանի
Դ լսարանի սան

Գեւորգ Զ. ՉՈՐԵՔՉՅԱՆ

Կաթողիկոս Ամենայն Հայոց (ծն. 1868, կթղ. 1945-1954)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Սկիզբը՝ էջ 2

Հայոց պատմութիւնը տառապանքների ու նեղութիւնների, կոտորածների եւ գերեվարութեան անվերջ շղթայ է, կենդանի նահատակութեան աննման մի երեւոյթ ազգերի կեանքում: Ամեն ինչ նիւթական մեռել է նրա կեանքում, եւ միայն Հայոց Եկեղեցին է, որ առկայծեալ պատրոյգի նման անշէջ է մնացել՝ որպէս հայ ժողովրդի միակ յուսոյ եւ մխիթարութեան ապաւէն: Նա թէեւ աստանդական, փառքից ու շքեղութիւնից զրկուած, բայց կատարել է իր պարտքը՝ խնամածու եւ գորովագութ մայր հանդիսանալով իր հօտին: Եւ այս է պատճառը, որ երախտագէտ ժողովուրդը այնպիսի հրաշալի աւանդութիւններ է հիւսել նրա նշանակութեան մասին եւ իր երգիչների բերանով սրտառուչ մաղթանքներ ուղղել առ Աստուած՝ «Միշտ անշա՛րժ պահեա զաթոռ Հայկազնեայց»:

Հայ Եկեղեցու միութեան արտայայտութիւնն է Հայոց հայրապետութիւնը, որի նշանակութիւնը այժմ ոչնչով նուազ չէ անցեալից: Իւրաքանչիւր ազգ պէտք է մի կենտրոն, մի սրբավայր ունենայ, ուր ուղղել կարողանայ իր աչքերը իբր ամբողջութիւն: Այդ կենտրոնն ու սրբավայրը հայ ժողովրդի համար Սբ Էջմիածինն է՝ Հայաստանեայց Եկեղեցու ծագման եւ հաստատութեան որրանը, որի տօնը կատարելու ենք ժողովուել սրբավայրիս մէջ:

Մի ազգի ինքնուրոյն կեանքի պահպանութեան համար շատ գործօններ կան, բայց ամենից զօրեղը ազգային Եկեղեցին է այժմ մեզ համար: Հայութեան մի ստուար մասը զաղթել է իր պատմական հայրենիքից եւ ցրուել օտար ազգերի մէջ: Նա կորցրել է շատ տեղերում իր մայրենի լեզուն, ազգային բնորոշ սովորութիւններն ու տեղական աւանդութիւնները, ազգային գրականութիւնն ու պատմութիւնը մեռած տառ է նրա համար, բայց հաւատարիմ է մնացել իր Եկեղեցուն: Հնդկաստանի, Պարսկաստանի խուլ անկիւնների, Ռումինիայի, Աւստրիայի հայութիւնը իր Եկեղեցիով է անբաժան մնացել ազգութիւնից. նա հայերէն չի խօսում, բայց իրեն հայ քրիստոնեայ է համարում եւ ջերմ սիրով կապուած Սբ Էջմիածնի հայրապետական աթոռի հետ: Հայոց հայրապետական աթոռը աստուածային պարգեւ է մեզ համար՝ դարերի պատմութեամբ սրբագործուած եւ խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կեանքի մէջ: Ջլատել նրա բարոյական ոյժն ու հեղինակութիւնը, սառնութիւն քարոզել նրա դէմ եւ ժողովրդին մոլորեցնել՝ երեխայական անմտութիւն է եւ ազգավնաս գործողութիւն: Մենք յոյս ունինք, որ այս ժամանակաւոր մոլորութիւնները կը չքանան, ինչպէս առաւօտեան մէգը՝ արեւի ճառագայթների առաջ, եւ ներկայ հայը, իր պապերի նման, կ՚աղօթէ. «Միշտ անշա՛րժ պահեա զաթոռ Հայկազնեայց»: Ամէն:

8 յունիսի 1914 թ.

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 2

Մկրտության ժամանակ մենք ստանում ենք նոր ծնունդ, նոր կյանք եւ նոր շնորհներ, ընդունում ենք նոր բնություն: Այս նոր բնությունն ունի հոգեւոր կյանքի մեծ ընդունակություն եւ ուժ: Իսկ մկրտվածը մեղանչում է ոչ թե մեղքի կողմը հակված լինելու, մեղքի իշխանության տակ գտնվելու պատճառով, այլ սատանայի խաբեության, գայթակղության պատճառով, սակայն մկրտությամբ ստացած շնորհներով մարդը մեծ զորություն ունի սատանային հաղթելու: Բողոքականները, ավետարանականները մերժում են նաեւ մանուկների մկրտությունը՝ փոքրիկ երեխաներին զրկելով աստվածային շնորհներից: Նրանց սխալ կարծիքն այն է, որ մարդը պետք է մկրտվի իր ազատ կամքով եւ հավատալուց հետո: Բայց Եգիպտոսում, ինչպես նաեւ Կարմիր ծովով անցնելիս երեխաները ծնողների հոգածության շնորհիվ փրկվեցին: Հին Կտակարանում նշվում է, որ ծնողների հոգածությամբ թլփատվելով՝ երեխան դառնում էր Աստծո ժողովրդի անդամ եւ ժառանգակիցը Աստծո տված խոստումների (Ծննդ. ԺԷ 11-12), ուստի ծնողները ոչ թե սպասում էին, որ երեխան մեծանա եւ իր ազատ կամքով ընտրի՝ փրկվի՞, թե՞ ոչ: Ինչպես ծնողները երեխայի կամքից անկախ հոգ են տանում նրա սնվելու, կրթության եւ դաստիարակության համար, այդպես էլ պետք է հոգ տանեն երեխայի հոգու եւ հատկապես մկրտությամբ աստվածային շնորհների ստացման համար: Սուրբ Գրքում գրված է, որ հաճախ մկրտվել են նաեւ ամբողջական ընտանիքներ (Ա. Կրնթ. Ա. 16. Գործք Ժ. ԺԶ. ԺԸ գլուխները, Ա Կոր. Ա 16), եւ անտրամաբանական է պնդելը, որ այդ բոլոր ընտանիքներում երեխաներ չեն եղել: Բացի դրանից, Սուրբ Գրքում չկա ոչ մի համար, որ արգելի երեխաների մկրտությունը: Սա ցույց է տալիս, որ բողոքականների կարծիքները հիմնված են առաջին հերթին իրենց տրամաբանության եւ ոչ թե Սուրբ Գրքի վրա: Հետեւաբար պետք է հեռու մնալ աղանդավորների՝ ոչ հոգեւորական անձանց կողմից կատարվող սուտ մկրտություններից, եւ եթե չմկրտված նորածիններ ու մանուկներ ունեք, շտապեք Եկեղեցի՝ մկրտությամբ նրանց արժանացնելու աստվածային օրհնությանն ու շնորհներին:



ՄՈՎՍԵՍՆԵՐ ԵՎ ՔՐԻՍՏՈՍՆԵՐ

Մենք ինքներս ինչ-որ իմաստով մովսեսներ եւ քրիստոսներ ենք: Մովսես անունը, հրեական հայտնի պատմիչ Հովսեփոս Փլավիոսի խոսքերով, կազմված է եգիպտական *մօ* եւ ***իսիս*** բառերից: ***Մօ*** նշանակում է ջուր, իսկ ***իսիս***՝ պահպանված, փրկված: Հետեւաբար՝ ***Մովսես, Մօիսիս*** նշանակում է ջրից փրկված: Իսկ ***Քրիստոս*** անունը թարգմանաբար նշանակում է օծյալ: Եվ Մովսեսը, որ նաեւ ջրի միջոցով փրկվել էր, հետագայում նույն կերպ փրկեց իր ողջ ժողովրդին՝ անցկացնելով Կարմիր ծովով, այն է՝ ջրի միջով, դրանով խորհրդանշելով ջրով եւ Հոգով մկրտությունը, որի ժամանակ մկրտվողները, ավազանից ելնելով եւ սուրբ մյուռոնով դրոշմվելով, դառնում են քրիստոսներ, այսինքն՝ Աստծո օծյալներ: Եվ հենց սա էլ ի նկատի ունենալով է, որ մկրտության ժամանակ հոգեւորականն ասում է մկրտվողին. «Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ»: Ուստի, այս հիանալի ճշմարտութիւններն իմանալով՝ ջանանք արդյունավետությամբ գործածել մեզ տրված աստվածային շնորհները, իզուր չվատնենք մեր կյանքի թանկ ժամանակը, ապրենք աղոթքով, պահեցողությամբ եւ բարեպաշտությամբ, որպեսզի այս կյանքից մեկնելիս մեզ ընդառաջ գա Տերը եւ հավիտենական խաղաղության ու երջանկության հրավիրելով՝ ասի. «Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ»:

Շարունակելի

Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ

Սկիզբը՝ թիվ 4-11

Դարձյալ հարց է ծագում՝ ի՞նչ գրքեր էր իր հետ տարել հեթանոս Եպիփանը,- անկասկած, դրանք *հեթանոսական* գրքեր են եղել, որ ոչնչացման վտանգից փրկելու նպատակով Եդեսիայի գրադարանից տարել էր Եպիփանը՝ անշուշտ օգտվելով հեթանոս դիվանապետի աջակցությունից: «Որ փնտրես գտնես, նա կկատարի քո փափագը»,- խորհուրդ է տալիս դիվանապետը: Այստեղ էլ տեսնում ենք, որ Մեսրոպի *փափագը* կապված էր հեթանոս դպրապետի եւ նրա տարած հեթանոսական գրքերի հետ: Իսկ այդ փափագը ակնհայտորեն հայոց հին գիրն էր՝ այդ գիրը վերծանելն ու խոսեցնելը:

Եդեսիայի Ռաբուլաս եպիսկոպոսի օգնությամբ, տեղեկանալով Եպիփանի գնացած վայրի մասին, Մեսրոպը Փյունիկեով անցնում է Սամոս (կղզի Էգեյան ծովում) (ըստ Կորյունի՝ Մաշտոցը գնում է Սամոսատ քաղաքը՝ միայն հայոց նշանագրերը Եդեսիայում գտնելուց հետո): Բայց այդ ժամանակ հիշյալ Եպիփանն արդեն մեռած էր, եւ Սամոսում Մեսրոպը հանդիպում է նրա աշակերտ Հռոփանոսին, որը հելլեն գրչության հրաշալի արվեստ ուներ եւ որի մոտ պետք է մնացած լինեին Եդեսիայի դիվանից Եպիփանի բերած հեթանոսական գրքերը: Բայց, ինչպես գրում է Խորենացին, սրանից էլ շահ չգտնելով՝ Մեսրոպն ապավինում է աղոթքի:

Եվ այսպես, Պատմահայրը մեզ բերում հասցնում է ճիշտ այնտեղ, որտեղ կանգ ենք առել Կորյունի բնագրում: Եվ հենց այստեղ երկու հեղինակների մոտ էլ վրա է հասնում գրաստեղծման պահը: Բայց ի՞նչն է զարմանալի,- երկու հեղինակներն էլ աշակերտել են Մաշտոցին եւ Սահակին, երկուսն էլ նրանց իրենց հայրերն են համարում, այսինքն՝ ոչ միայն շփվել են անձամբ, այլ սիրելի են եղել նրանց իբրեւ ուշիմ աշակերտներ, եւ պետք է որ Կորյունն ու Մովսեսը անձամբ նրանցից լսած լինեին հայոց նշանագրերի գյուտի իրական պատմությունը: Բայց որքա՜ն տարբեր են մատուցում նրանք գալիք սերունդներին գրաստեղծման այդ պահը, որն ըստ Կորյունի՝ Մաշտոցին պարգեւվեց Աստծուց աղոթքներով ու հեծեծանքներով, իսկ ըստ Խորենացու՝ Մեսրոպին շնորհվեց Սամոսում՝ քաղաքե-քաղաք որոնելուց եւ գրչության արվեստի հեթանոս ճարտարների ու հեթանոսական մատյանների փնտրտուքից հետո, աստվածային տեսիլքով եւ Աստծո բաքի եբեւույթով:

Կորյունը միայն անցողակի նշում է Եդեսիայում Մաշտոցի եւ նրա ընկերների սովորական աղոթքներն ու տքնությունները, արտասվալից պաղատանքները, խստամբերությունները ու աշխարհահեծ հոգսերը, որից հետո նա (Մաշտոցը) իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրերը. «Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եվ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք» (Կոր. Ը, էջ 48): Բայց այն, ինչ այստեղ հաղորդում է Խորենացին, դարձյալ ավելին է, քան պատմում է Կորյունը. «Եվ տեսանում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երեւում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես, որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երեւաց, այլեւ բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը» (Խոր. (Մալխ.) Գ. ԾԳ, էջ 293):

Վերն ասվածի լույսի տակ միանգամայն նոր իմաստ է ստանում Կորյունի այն տարօրինակ տեղեկությունը, որ Եդեսիայից նորնոր Վաղարշապատ վերադարձած Մաշտոցը, ուրախության տոնական օրերն անցնելուն պես, բազավորից շուտափույթ հրաման է առնում՝ սկսելու [ուսուցանել] Մարաց խուժադուժ կողմերը. «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելով զխուժադուժ կողմանցն Մարաց» (Կոր. [Ժ], էջ 54),- մինչդեռ սպասելի էր, որ նորագյուտ այբուբենի ուսուցումը սկսվեր հենց մայրաքաղաքից: Եվ Մաշտոցն առաջինը գնում է հեռավոր Մարաց կողմերը՝ Ատրպատականի սահմանում՝ Պարսպատունիք եւ Մարանդ գավառները, որ գրեթե կտրված էին հայկական միջավայրից: *(Մ. Աբեղյանը Կորյունի «Վարք Մաշտոցի»-ի աշխարհաբար թարգմանության մեջ «Մարաց կողմերի» տեղադրմանը անդրադարձել է երկու անգամ. «Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականության սկիզբը» ներածական ուսումնասիրության մեջ նա «Մարաց կողմեր» է համարում «Մասիսից բռնած Արաքսի երկու կողմում մինչեւ Նախիջեւան եւ Ջուղա, մինչեւ Գողթն գավառի սահմանները» (Կորյուն, Վարք Մաշտոցի. Երեւան 1962, էջ 15): Նման տեղադրումը հակասում է Մովսես Խորենացու վկայությանը, ըստ որի՝ Անձեւացյաց գավառից հալածված դեւերը նույնպես փախան ընկան Մարաց կողմերը. «Եւ ի բազնացն փախուցեալք դեւքն անկանէին յերկիրն Մարաց» (Խոր. Մատենագրութիւնք, էջ 302): Անձեւացյաց գավառից քրմերը պետք է փախած լինեին ավելի հեռու ծայրամաս եւ ոչ թե գային հասնեին Հայաստանի կենտրոնը: Ագաթանգեղոսի Պատմության մեջ Մարաց «ամուր աշխարհ»-ը հիշատակվում է Կորդուքի եւ Մահքր-տուն աշխարհի միջեւ, որոնք ընկած էին Վանա ծովից հարավ եւ հարավ-արեւելք. «.... քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն, եւ առ Կորդուօք մինչեւ յամուր աշխարհն Մարաց, մինչեւ առ տամբն Մահքր-Տան իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգտէր տարածանէր [Գրիգոր] զաւետարանութիւնն իւր» (Ագաթ., § 842): Այստեղ հիշված Նոր Շիրական երկիրը «Աշխարհացոյց»-ի Պարսկահայք նահանգն է: Ըստ Ագաթանգեղոսի, ուրեմն, Մարաց ամուր աշխարհը գտնվում էր Մեծ Հայքի հարավարեւելյան ծայրամասում՝ Ատրպատականից դուրս: Երկրորդ անգամ Մ. Աբեղյանը նույն գրքի 55-րդ ծանոթագրության մեջ (էջ 144) նոր բացատրություն է տալիս. «Մարք, ի կողմանս Մարաց- մարեր, մարերի կողմեր: Այս անվան տակ չպիտի հասկանալ Մեծ կամ Փոքր Մարաստանը, այլ Արաքսից հարավ գտնվող լեռնային Ղարադաղը, որը հին Հայաստանի Վասպուրական նահանգի մասն էր կազմում, Պարսպատունիք եւ Մարանդ գավառները: Հնում այստեղ մարեր են բնակվելիս եղել, դրա համար այդ կողմերի անունը մնացել է Մարք»: Ս. Տ. Երեմյանը Ղարադաղի լեռնային շրջանում, որ Ստրաբոնը անվանում է Հայկական լեռներ, տեղադրում է միայն Պարսպատունիք գավառը (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 67. տե՛ս նաեւ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երեւան, 1971, էջ 17): Ս. Տ. Երեմյանի կարծիքով՝ «Մարաց ամուր աշխարհը» գրավում էր Նիխորական, Մահկեր-տուն եւ Դաֆն հայկական գավառների տարածքը (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65): Ըստ Է. Դանիելյանի՝ «Մարաց ամուր աշխարհը» ընդգրկում էր Ատրպատականի ծայրամասային՝ լեռնային դժվարամատչելի շրջանները՝ բնակեցված իրանական մի քանի ցեղերով, եւ այն չպետք է նույնացնել Նիխորական, Մահկեր-տուն եւ Դաֆն հայկական գավառների տարածքի հետ (տե՛ս Է. Դանիելյան, Հայ-բյուզանդական հարաբերությունները եւ Մարաց իշխանը 646 թ. – Պատմա-բանասիրական հանդես, 1983, № 4, էջ 24-27: Տե՛ս նաեւ նույնի՝ Հայաստանի քաղաքական պատմությունը եւ հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երեւան, 2000, էջ 199):*

Շարունակությունը՝ էջ 6

Ավարտվեց Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական այցը Թուրքիա

Սկիզբը՝ էջ 1

Իր հերթին Վեհափառ հայրապետը գոհունակություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ կարեւորելով հոգեւորականաց մոր սերնդի պատրաստությունը՝ Եկեղեցու եւ ժողովրդի ծառայության գործում եւ գոհություն հայտնեց երկնավոր Տիրոջը՝ իրենց կյանքն Աստծուն ընծայող անհատների դաստիարակության եւ պատրաստության նպատակով Եկեղեցիների առաջնորդների ընծեռված հնարավորության համար: Նորին Սրբությունն ընդգծեց հույսի կարեւորությունը կենաց պայքարում եւ այդ առաքելության իրականացման գործում, որին կոչված են ամենքը: Հայոց հայրապետը մասնավորաբար ադրբեջ կողում գտնվող Տիեզերական պատրիարքարանի ծնմարանի վերաբացման համար, որ 1970-ականներին փակվել էր Թուրքիայի իշխանությունների կողմից՝ ճշելով, որ Հայ Եկեղեցին մինչտ աչակից է իր բոլոր Եկեղեցիներին բոլոր ոգեվարությունների մեջ:

Այնուհետեւ հայ եւ հույն պատվիրակությունները այցելեցին նաեւ կղզու պատմական գրադարանը եւ ծանոթացան վանական համալիրին:

Կեսօրին երկու հայրապետները, շքախմբի ուղեկցությամբ, մեկնեցին հայկական մեծաթիվ բնակչությամբ հայտնի Քնալը կղզին եւ այցելեցին հայկական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր նրանց այցին էին սպասում բազում հայորդիներ: Նրանք մասնակցեցին համատեղ աղոթքի արարողությանը: Եկեղեցում երկու հայրապետերին ողջույնի խոսքով դիմեց Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը՝ ուրախություն հայտնելով Ամենայն հայոց կաթողիկոսի առաջին հովվապետական այցի առիթով:

Բարեպաշտ հավատավոր իր հոտին հայրապետական խոսք ուղղեց նաեւ Ամենայն հայոց կաթողիկոսը՝ ճշելով, որ իր այցը Թուրքիա հնարավոր դարձավ համատեղ հրավերով Տիեզերական պատրիարքի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքի, եւ ուրախություն հայտնեց միասնաբար աղոթելու, ինչպես նաեւ Հայ եւ Հույն Եկեղեցիների միջեւ հարաբերությունները ամրապնդելու հնարավորության համար, ինչը կնպաստի բոլոր Եկեղեցիների միջեւ համագործակցության առավել զարգացմանը: Հղելով հայրապետական օրհնությունները համախումբ հայորդիներին՝ Վեհափառ հայրապետն աղոթեց աշխարհում խաղաղության եւ սիրո համար: Նորին Սրբությունը գնահատանքով նշեց, թե որքան հայտնի է պոլսահայ համայնքը իր հավատարմությամբ հանդեպ Մայր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչպես նաեւ ամուր հավատով եւ սիրով հանդեպ ազգային, մշակութային եւ հոգեւոր արժեքները: Գարեգին Բ հայրապետն անդրադարձավ նաեւ պատմության ընթացքում եւ այսօր Կ. Պոլսի հայ համայնքի ազգային կյանքում ունեցած ավանդին, որի շնորհիվ մշտապես պահպանվել է քրիստոնեական կյանքը Ստամբուլում: Նորին Սրբությունը հորդորեց նրանց հավատարիմ մնալ իրենց հավատքին, մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Եկեղեցուն եւ հայ համայնքին՝ իրենց ծառայության ճանապարհին:

Վերջում Նորին Սրբությունը հրավիրեց Տիեզերական պատրիարքին եւ ամենապատիվ պատրիարքին Սուրբ Գրիգորի խորանից միասնաբար օրհնելու բարեպաշտ ժողովրդին: Արարողությունից հետո, ի պատիվ հյուրերի, եկեղեցու պարտեզում կազմակերպվեց ընդունելություն:

Հունիսի 22-ի երեկոյան ավարտվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի եղբայրական փոխադարձ այցը Կոստանդնուպոլսի Բարբորոմնոս Ա Տիեզերական պատրիարքին, եւ սկսվեց հովվապետական այցելությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքություն եւ պոլսահայ համայնքին:

«Հրաշափառի» հանդիսավոր երգեցողությամբ մեր դարձ պոլսահայ համայնքը ցնծությամբ ողջունեց Ամենայն հայոց կաթողիկոսին եւ ուղեկից շքախմբին՝ Ստամբուլի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Բարիգալստյան արարողությանը ներկա էին Հայոց պատրիարքության բարձրաստիճան եկեղեցականներ, բույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Թուրքիայում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանը, բազում հավատավոր հայորդիներ, ովքեր եկել էին առաջին անգամ տեսնելու հայոց հովվապետին եւ ստանալու նրա հայրապետական մյուռոնաբույր աջի օրհնությունը:



Արարողության ավարտին Ամենայն հայոց կաթողիկոսին ողջունեց Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը՝ Հայոց պատրիարքության, եկեղեցականների եւ բարեպաշտ հոտի անունից բարի գալուստ մաղթելով Նորին Սրբությանը եւ հրավիրելով հայրապետական իր խոսքն ուղղելու ներկա հավատավոր ժողովրդին:

Պատմական ու հուզիչ այդ պահին Վեհափառ հայրապետը գոհություն ու փառաբանություն բարձրացրեց առ Աստված՝ «Թագաւոր խաղաղութեան, Քրիստոս Աստուած մեր, պարգեւեցեալ զժողովուրդս քո ընդ հովապետ պահեա՝ զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի Քո ի խաղաղութեան» աղոթքով: «Այժմ ձեզ հետ դաղութեան» աղոթքով: «Այժմ ձեզ հետ ենք, սիրելիներ: Նվիրական այս աղոթքը դարեր շարունակ հնչել է նաեւ հոյակերտ դարձ Հայոց եկեղեցում: Հնչել է շուրջերիդ մեր եկեղեցու քաջաւոնում ու փառավորյալ շատ հոգեւորականների, ովքեր հավատի մարտիկներ եղան, բաց հովիվներ, որ իրենց կյանքը նվիրեցին Աստծուց իրենց վստահված հոտի համար եւ հավատի կենարար լույսով առաջնորդեցին դեպի արարումների, նվիրումի ու հավատարմության: Կոստանդնուպոլսի Հայոց հինգ Պատրիարք Աստծո եւ ազգի կամոք կոչվեցին որպես Ամենայն Հայոց Հայրապետ՝ առաջին սպասավոր լինելու մեր Սուրբ Եկեղեցու, եւ այս Սուրբ Խորանի առաջեւ ծունր դնելով, Սուրբ Աստվածածնի բարեխոսությունը ազգիս համար հայցելով՝ մեկնեցին բազմելու Լուսավորչի Գահին: Դժվարին ժամանակներում լուսամիտ եւ բաջակորով Հայրապետները պահպանեցին մեր ժողովրդին՝ համախմբելով Սուրբ Էջմիածնի շուրջ՝ փրկության հույսով ու հավատով: Ահա Լուսավորչի Գահից՝ հավատի մեր սրբօրրան Սուրբ Էջմիածնից, եկել ենք Մեր օրհնությունն ու սերը բաշխելու ձեզ, եկել ենք, որպեսզի Հայրապետ եւ հոտ՝ մեր սուրբ հայրերի նույն ուխտով միավորենք մեր աղոթքները նրանց հայցին՝ հանուն աշխարհի խաղաղության եւ ի սփյուռս աշխարհի ազգիս՝ հավատով ու միաբան պահպանությամբ:

...Վեց հարյուր տարի Պատրիարքության Եկեղեցիները զորավոր պահեցին առ Քրիստոս հավատը եւ փրկության հույսը մեր ժողովրդի հոգում, վեց հարյուր տարի դպրոցներում անանգարտ հնչեց մեր մայրենի լեզուն, ու ոգի դարձավ հայրենական ավանդները: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության հետ կապված են մեր մշակույթի ամենաբյուրեղ բարձունքները՝ գրականության, գեղարվեստի, երաժշտության, ճարտարապետության ասպարեզներում:

...Այդ մեծ ժառանգության կրողն ու պահպանողն եք դուք՝ առաջնորդությամբ նվիրյալ հոգեւորականների՝ ի գլուխ Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի: Ամեն հայի համար, նույնիսկ եթե չի եղել այստեղ, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունն՝ իր անցած ուղիով, հայ կյանքին բերած արգասիքներով ու ներկայով, շարունակում է մնալ մարմնավորումն հավատարմության, հավատարմության՝ հայրենական մեր արժեքների, բրիստոնեական ոգուն, խաղաղության, արդարության հույսին, աշխարհի փրկության հույսին, որի շնորհը ունենք Քրիստոսով:

Այս զգացումով ու ապրումով եկանք դեպի ձեզ, այցելելու հնագույն, խնկաբույր եկեղեցիները, որ պայծառ են ձեզանով, կրթական ու մշակութային հաստատությունները, որ շարունակում են լույսով լեցուն մնալ ձեր նախաձեռնությամբ: Եկանք օրհնելու ձեր ընթացքը, բաջալերելու ձեր նախաձեռնությունը, անվարան կամքը եւ անսակարկ նվիրումը, որով ամուր կանգնած եք Սուրբ Գրիգոր Լուսավորչի հաստատած հավատի վեմի վրա՝ Ձեր հոգիներում առկայծ պահելով Սուրբ Էջմիածնի լույսը, որը միշտ անմար փայլել է Պատրիարքության վանքերում ու եկեղեցիներում: Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անհուն կարոտն ու սերն եք բերել ձեզ, սիրելի ժողովուրդ, ողջույն եք բերել աշխարհասփյուռ մեր ժողովրդից, որ միշտ ձեզ հետ են իրենց ամենաջերմ աղոթքով: Բերել եք նաեւ մեր Հայրենիքի վերածնվող նոր կյանքի լավատեսությունը, համայն մեր ժողովրդի միասնական հոգեւոր, մշակութային կյանքի զորացման հույսերը: Իր բոլոր զավակներով է հաստատում ու պայծառ մեր Սուրբ Եկեղեցին եւ զորավոր իր առաքելության ճանապարհին, որ նույնն էր երեկ, այսօր ու միշտ՝ առաջնորդելու հայոց փոքր հոտը դեպի կենարար ու փրկարար լույսը հավատի, դեպի խաղաղարար ու բարեկամ Աստված: Հավատարիմ մնանք Տիրոջ Սուրբ Ավետարանին, հավատարիմ մնանք մեր Սուրբ Եկեղեցուն եւ մեզ ավանդված խաղաղության հայցին»,- ասաց Նորին Սրբությունը հայրապետական սիրո եւ օրհնության իր պատգամում:

Վեհափառ հայրապետը նաեւ աղոթք բարձրացրեց առ ամենողորմ Տեր՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության երջանկահիշատակ գահակալների արդար հոգիների հանգստության համար: Հայցով առ Աստված Ամենայն հայոց կաթողիկոսը մաղթեց նաեւ, որ Հիսուս Քրիստոսն Իր սուրբ ու պատվական Խաչի ներքո պահպանի հաստատուն, շեմ ու պայծառ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը եւ երկար տարիների օրհնյալ գահակալություն պարգեւի ամենապատիվ Մեսրոպ պատրիարքին:

Այնուհետեւ ընթերցվեց հայրապետական սրբատառ կոնդակ, որով գերաշնորհ Տ. Արամ եպս. Աթեշյանին՝ Կրոնական ժողովի ատենապետին եւ պատրիարքության լուսարարապետին, Մայր Եկեղեցուն բերած տասնյակ տարիների անսակարկ նվիրյալ ծառայության եւ վաստակի համար շնորհվեց արքության պատիվ:

Հունիսի 23-ին Վեհափառ հայրապետը եւ Կ. Պոլսի հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը՝ շքախմբի ուղեկցությամբ, այցելեցին Ստամբուլի Բաքրքյուղի Ծնունդ Սբ Աստվածածնի եկեղեցին եւ եկեղեցում կից Տատյան վարժարանը:

Նորին Սրբությունը հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց ներկա հավատավոր ժողովրդին, ապա Կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ ներկա գտնվեց վարժարանի սաների կողմից պատրաստված հանդիսությանը: Հանդիսության ավարտին Վեհափառ հայրապետը հանդիպեց շուրջ 400 սաների, ուսուցիչների, տնօ-

րինության եւ հարյուրավոր հավատացյալների հետ՝ ընդգծելով պոլսահայության՝ ազգային կյանքում ունեցած կարեւոր դերը շուրջ 500 տարիների ընթացքում: Նորին Սրբությունը մեծապես կարեւորեց եկեղեցու եւ դպրոցի միմյանց մերձ գտնվելը եւ հայրապետական իր գնահատանքը հայտնեց համայնքի ծխական խորհրդին, տնօրինությանը եւ վարչությանը՝ նվիրյալ ծառայության համար: Վեհափառը շնորհավորեց նաեւ վարժարանի սաներին՝ տաղանդաշատ ելույթների համար եւ հրավիրեց Հայաստան՝ այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տները:

Այնուհետեւ հայրապետական պատվիրակությունն ուղղվեց դեպի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոց, ուր նրանց դիմավորեց հիվանդանոցի հոգաբարձու եւ հովվապետական այցի կազմակերպիչ հանձնախմբի նախագահ տիար Պետրոս Շիրինօղլուն: Սրբազան պատրիարքը հանգամանորեն ներկայացրեց հիվանդանոցի պատմությունը՝ նշելով, որ այն հաստատվել է ավելի քան 175 տարի առաջ եւ ներկայիս Թուրքիայում մեծագույն հայկական ազգային հաստատությունն է: Պատրիարքը նաեւ նշեց, որ այն եղել է Օսմանյան կայսրության առաջին հիվանդանոցը եւ այսօր էլ շարունակում է իր առաքելությունը՝ երկրի հայ համայնքի կյանքում: Սուրբ Փրկիչ հիվանդանոցի հովանու ներքո գործում են նաեւ ծերանոց եւ հաշմանդամ երեխաների կենտրոն:

Այստեղ Ամենայն հայոց հովվապետն այցելեց հիվանդներին, հանդիպեց բժշկական անձնակազմի, վարչության եւ հոգաբարձուների հետ: Հիվանդանոցի մատուռում Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ հաստատության բոլոր բարերարների հոգիների խաղաղության համար:

Իր խոսքում հայոց հայրապետը գնահատանք հայտնեց սրբազան պատրիարքին եւ բժշկական կենտրոնի հոգաբարձուներին՝ նշելով, որ հիվանդանոցի մատուցած ծառայությունը սքանչելի արտահայտությունն է քրիստոնեական քաղցրության եւ սիրո: Նշեց նաեւ, որ յուրաքանչյուր անհատ կոչված է ծառայության իր նմանին, եւ Սուրբ Փրկիչ հիվանդանոցն իր մարդասիրությամբ եւ բարերարությամբ քրիստոնեական ծառայության լավագույն օրինակ է:



Այնուհետեւ Ամենայն հայոց կաթողիկոսն այցելեց հիվանդանոցի թանգարան:

Կեսօրին Ամենայն հայոց հովվապետն այցելեց նաեւ Սամաթիայի Սուրբ Գեւորգ եկեղեցի, որ մինչեւ 1641 թ. եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքների նստավայրը: Նորին Սրբությունը ողջունեց եւ օրհնեց խոնարհ ժողովրդին՝ հորդորելով հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն եւ ազգային արժեքներին:

Վեհափառ հայրապետն այցելեց նաեւ եկեղեցու հարեւանությամբ գտնվող պատմական Սահակյան ազգային վարժարան, հանդիպեց կրթօջախի սաների, ուսուցիչների եւ տնօրինության հետ:

Յունիսի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի, ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանի, Թուրքիայում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանի եւ հովվապետական այցի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ տիար Պետրոս Շիրինօղլուի ուղեկցությամբ, Ստամբուլի նահանգապետարանում հանդիպում ունեցավ Ստամբուլի նահանգապետ տիար Մուամմար Գյուլերի հետ:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Տիեզերական պատրիարքի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքի համատեղ հրավերով գտնվում է Ստամբուլում՝ միջեկեղեցական եւ հովվապետական այցով: Վեհափառ հայրապետը գոհունակություն հայտնեց, որ առիթ ընձեռվեց իրեն առավել ծանոթանալու ստամբուլաբնակ հայ համայնքին:

Իր խոսքում Վեհափառ հայրապետը նշեց, որ տեղյակ է, որ հոգեւոր եւ ազգային կյանքն արդյունավոր կազմակերպվում է հայ համայնքում: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ համայնքում առկա կալվածային եւ ուսումնական որոշ հարցերի եւ հույս հայտնեց, որ դրանք կառաջնորդվեն բարեհաջող լուծման:

Պատասխան իր խոսքում նահանգապետ Գյուլերը, ողջունելով հայոց հայրապետի այցը Ստամբուլ, հույս հայտնեց, որ երկու ժողովուրդների հարաբերությունները կբարելավվեն:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը, անդրադառնալով երկու ժողովուրդների հարաբերություններին, ընդգծեց, որ բարելավման առնչությամբ նույն ցանկությունները ունի նաեւ հայ ժողովուրդը, եւ համոզում հայտնեց, որ այդ հարաբերությունները կբարելավվեն արդարության հիմքի վրա:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական այցի, ինչպես նաեւ Ստամբուլի նահանգապետարանի գործունեությանն առնչվող հարցեր:

Յունիսի 25-ին Վեհափառ հայրապետը սուրբ Պատարագ մատուցեց Ստամբուլի Սուրբ Աստվածածին աթոռանիստ եկեղեցում:

Հայրապետական պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Կ. Պոլսի հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը, Նորին Սրբության ուղեկից շքախմբի անդամները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Թուրքիայում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանը եւ հարյուրավոր հավատավոր հայորդիներ:

Պատարագի ընթացքում աղոթերականներ էին ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը եւ ԱՄՆ Արեւելյան թեմի միջեկեղեցական գրասենյակի պատասխանատու, ԱՄՆ Եկեղեցիների Ազգային խորհրդի նախագահ Տ. Վիգեն եպս. Այքազյանը:

Պատարագի ընթացքում Վեհափառ հայրապետը «Ես կենդանի եմ, եւ դուք կենդանի եք լինելու» բնաբանով հայրապետական իր պատգամն ուղղեց ներկա ժողովրդին: Նորին Սրբությունը փառք եւ գոհություն մատուցեց Բարձրյալ Աստծուն, որ Իր բարերար Կամքով պարգեւեց իրեն շնորհը՝ հովվապետական անդրանիկ այցելությունը կատարելու Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն եւ աղոթքույր ու նվիրական Մայր եկեղեցու կամարների ներքո աղոթք բարձրացնելու երկինք՝ ամենապատիվ պատրիարքի եւ հավատավոր սիրելի ժողովրդի հետ:

«Կենդանի է Քրիստոս, եւ՝ բոլոր նրանք, ովքեր կհավատան Նրան՝ մեզ համար խաչյալ, թաղյալ եւ երրորդ օրը հարուցյալ Փրկչին աշխարհի: Այսպես ուսանեց մեր ժողովուրդը: Այս հավատով հայրենի հողին կառուցեց լուսավորչատեսիլ Սուրբ Էջմիածինը, իբրեւ երկնային շնորհի ընդունեց մաշտոցյան գրերը, հաստատվեց քրիստոնեական իր ինքնության մեջ, ու երբ ժամը հնչեց, հանձն առավ հանուն հավատի մահն իմացյալ եւ ապրեց ու ստեղծեց Աստծո հետ:

Արդարեւ, առանց Աստծո չուզեց ապրել մեր ժողովուրդը: Վկայությունը այդ հոգեղեն ու ոգեղեն իրողության ամենավավերական կերպով մատուցում է նաեւ վեցդարյա պատմությունը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության: Անմահ են անունները մեծագործ Պատրիարքների, ովքեր անձնուրաց հոգացին իրենց վստահված ժողովրդի համար, պահպանեցին, աճեցրին ու զորացրեցին հավատի լույսով եւ իրենց շնորհաշատ մտքի ու հավատավոր հոգու ազնիվ արգասիքները փոխանցեցին սերունդներին: Անմահ են արվեստի, կրթության ու գիտության գործիչների անունները, գործն ու ավանդը նրանց, հավատով ստեղծած արժեքները, որ գծագրում են մեր ժողովրդի պատմության մեջ լուսավորության լայն ուղի, արարումի ու առաջընթացի տեւական ճանապարհ: Հավատի ուժով լուսավորության ջահակիր է Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը: Ձեզ հետ այս օրերի ընթացքում մեկ անգամ եւս ունեցանք ապրումը, որ մեր ժողովուրդն իր հոգեւոր ներաշխարհի խորքերում կրում ու պահպանում է մշտանորոգ կյանքի խորհուրդը: Նույնիսկ Մեծ Եղեռնը չմարեց այդ խորհուրդը, երբ թվում էր, թե կյանքը կանգ պիտի առնի Պատրիարքության սահմաններում: Հավատով կենդանի հոգին մեր ժողովրդի փորձությունների մեջ գտավ զորությունը վերածնվելու եւ ապրելու, բարիք ստեղծելու ու դեպի բարին ձգտելու: Մեր հայրերից իբրեւ ամենամեծ ժառանգություն ստացած հավատն առ Աստված, առ Տերը մեր՝ Հիսուս Քրիստոս, դուք, սիրելիներ, եւ ձեր ծնողները պահպանեցիք ու խնամեցիք ձեր հոգիներում՝ դարձնելով սեր միմյանց հանդեպ, գործ միմյանց համար ու պայծառություն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

...Փառք Քեզ, Տե՛ր, որ առաջնորդեցիր Մեր քայլերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, եւ ականատեսը դարձանք ազգային ու եկեղեցական ծաղկուն կյանքին ու հավատավոր ու ավանդապահ ոգուն մեր ժողովրդի: Եկանք մեր հավատքի նվիրական օրրան ու կենտրոնից, որպեսզի միասին՝ Հայրապետ եւ ժողովուրդ, մեր սուրբ հայրերի հիշատակով, պատգամով ու ավանդով, մեր միասնական աղոթքով այս սուրբ եկեղեցու կամարների ներքո վկայենք, որ ազգս հայոց հաստատուն ու անսասան է Աստծո հետ իր ուխտին: Հավատարիմ է իր հայրերի սուրբ ժառանգությանը՝ միաբանության ուխտով Սուրբ Էջմիածնի»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Ամենայն հայոց կաթողիկոսը հորդորեց պոլսահայությանը զորացյալ պահպանել իրենց հավատքի կյանքը, նույն նվիրումով ու սիրով շենացնել ու պայծառացնել եկեղեցական եւ ազգային հաստատությունները: Նա շնորհակալական իր խոսքն ուղղեց սրբազան պատրիարքին եւ Կրոնական խորհրդի անդամներին՝ այն ջերմագին ընդունելության համար, որ կազմակերպվեց հովվապետական այցի օրերին: Վեհափառն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Կոստանդնուպոլսի հայոց պատ-

գիարքության ուխտապահ հոգեւոր դասին, եկեղեցական պատվարժան վարչականներին, զղրաց դասին, ազգային կառույցների ու միությունների, բարեգործական հասարակությունների ծառայասեր պատասխանատուներին ու բարեջան անդամներին, կրթության ու մշակութի շնորհալի գործիչներին, հայ մամուլի ներկայացուցիչներին՝ հայրերի սուրբ ժառանգությանը, հայրենական արժեքներին հավատարմության համար, արի ու անսակարկ նվիրումի համար:

Հայրապետական իր պատգամից հետո Ամենայն հայոց կաթողիկոսը ամենապատիվ Մեսրոպ պատրիարքին շնորհեց երկու պանակե եւ լանջախաչ Սուրբ Էջմիածնից՝ ի գնահատություն Կ. Պոլսի հայոց պատրիարքի երկարամյա նվիրյալ ծառայության:

Հունիսի 27-ի լույս 28-ի գիշերը Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսը, ավարտելով հովվապետական անդրանիկ այցը Ստամբուլ, վերադարձավ Մայր Աթոռ Սբ Էջմիածին:

Չնայած ուշ գիշերային ժամի՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Վեհափառ հայրապետին դիմավորելու էին եկել նաեւ բազմաթիվ հավատացյալներ: «Հրաշափառի» ներքո, եկեղեցական թափորի ուղեկցությամբ, Վեհափառ հայրապետն առաջնորդվեց Մայր տաճար: Իջնում Սբ Սեղանի առջեւ Նորին Սրբությունն աղոթք բարձրացրեց առ Աստված, ապա իր անմոռաց եւ ջերմ տպավորությունները փոխանցեց ներկաներին՝ հովվապետական այցելությունից: Ամենայն հայոց հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ այն խանդավառ ընդունելությանը, որ ցուցաբերել է ստամբուլահայ համայնքը՝ արտահայտելով իր սերն ու նվիրվածությունը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածինը:

«Փառք եւ գոհություն Աստծու: Գոհունակ սրտով վերադառնում ենք հովվապետական այցելությունից՝ տրված Կ. Պոլսո հավատավոր Մեր զավակներին: Հոգու բերկրանք ապրեցինք՝ անձամբ տեսնելով եւ ճանաչելով հավատավոր մեր զավակներին, նրանց խանդավառ նվիրյալ հավատքը, նրանց հայրենասեր ոգին: Հաղորդվեցինք Կ. Պոլսո հայոց Պատրիարքության 600 տարիների ստեղծած արժեքներին ու պատմությանը»,- ասաց Վեհափառ հայրապետը:

Ամենայն հայոց կաթողիկոսը գոհունակությամբ նշեց, որ Կ.Պոլսո հայախոս եւ հայաշունչ համայնքն այսօր ապրում է ազգային աշխույժ կյանքով: Գործում են շուրջ 39 եկեղեցիներ, 17 հայկական դպրոցներ եւ պոլսահայության համայնքային կյանքում կարեւորագույն հասատատության հանդիսացող Սբ Ամենափրկիչ ազգային հիվանդանոցը: Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ նաեւ Պոլսո հայ մտավորականության ու երիտասարդության հետ ունեցած իր հանդիպումներին:

Հայոց հայրապետը տեղեկացրեց, որ հովվապետական ողջ այցելությունը լայնորեն լուսաբանեցին ինչպես պոլսահայ, այնպես եւ թուրքական լրատվամիջոցները:

Պատասխանելով ներկաների հարցերին՝ Վեհափառ հայրապետն անդրադարձավ նաեւ Թուրքիայի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ ունեցած մամուլի ասուլիսին, որի ընթացքում խոսվել էր հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ի պատասխան այն մտահոգության, թե արդյո՞ք հայոց ցեղասպանության վերաբերյալ արված հայտարարությունը չի փոխի Թուրքիայի կառավարության վերաբերմունքը հայոց հանդեպ, Նորին Սրբությունը նշեց. «Չենք կարծում, որ մեր մտածումներն ու արտահայտությունները որեւէ կերպ կարող են փոխել իշխանությունների վերաբերմունքը դեպի պոլսահայ մեր համայնքը, որովհետեւ մենք որեւէ կերպ մեր խոսքերում ատելություն եւ բշնամանք չենք արտահայտել, պարզապես արձանագրել ենք ճշմարտությունն ու իրողությունը: Նկատի ունենալով այն ժողովրդավար գործընթացը, որ ծգտում են Թուրքիո իշխանությունները իրականացնել իրենց երկրում, նաեւ չենք կարծում, որ ծայրահեղ ազգայնական ուժերը պիտի հաջողեն ատելություն եւ բշնամանք սերմանել Թուրքիայում ապրող փոքրամասնությունների եւ հայոց նկատմամբ»:

Վեհափառ հայրապետն ավելացրեց, որ ինչպես բազմաթիվ պետություններ ճանաչել են հայոց ցեղասպանությունը, այնպես էլ Թուրքիան պետք է ճանաչի հայոց ցեղասպանությունը, եւ դրա համար ոչ մի քննարկումների անհրաժեշտություն չկա:

Նորին Սրբությունը միաժամանակ նշեց, որ կազմակերպված բողոքի ցույցերը, որոնք իշխանությունների կողմից բնութագրվում էին իբրեւ ծայրահեղական խմբավորումների գործողություններ, ընավ չեն սասվերել այցի տպավորությունները: Ձեռնարկված ամրոցացման անհանգստանալ միջոցառումների շնորհիվ դրանք չեն խոչընդոտել հովվապետական այցի ծրագրի իրականացմանը եւ անհնար են մնացել հայրապետական պատվիրակության ուշադրությունից:

Վերջում Նորին Սրբությունը մեկ անգամ եւս իր գնահատանքը հայտնեց Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին ու ստամբուլահայ հավատավոր հոտին ջերմ ընդունելության համար՝ աղոթք բարձրացնելով վասն Կ. Պոլսի հայոց պատրիարքության պայծառության ու անսասանության: Վեհափառ Հայրապետը նաեւ շնորհակալություն հայտնեց ներկաներին, ովքեր այդ ուշ ժամին եկել էին դիմավորելու իրենց կաթողիկոսին:



Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Թուրքիայի լրատվամիջոցների ներկայացուցիչներին տված մամուլի ասուլիսի սղագրությունը

Կ. Պոլսի հայոց պատրիարքարան, Ստամբուլ 25. 06. 2006 թ.

Մամուլի ասուլիսը վարում էր պատրիարքարանի խոսնակ Լուիզ Բաքարը: Բացման խոսքով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը:

Մեսրոպ արք Մութաֆյան.- Բարով եկաք, սիրելի՛ ընկերներ: Վեհափառ տերն այսօրվա իր ծրագրում Ձեզ համար կարողացել է հատկացնել կես ժամ: Նա Ֆեների Հունևաց եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքների հրավերով ժամանել է այստեղ հայրապետական այցով: Նա մեզ հետ կլինի միայնեւ հունիսի 27-ը: Նրա այցի նախօրեին որոշ լրատվամիջոցներում տեղ են գտել բավականին տարօրինակ լուրեր, որոնք մեզ մոտ էլ զարմանք առաջացրին: Դրանցում ասվում էր, թե հայ համայնքը եւ պատրիարքարանն անհանգիստ են այս այցից, սակայն համայնքում այդպիսի անհանգստություն չկար: Մինչ այս պահն այցն իրականացվել է նախատեսվածի պես: Առաջին երկու օրը կաթողիկոսը հյուրընկալվել է Հունևաց պատրիարքի կողմից՝ համաձայն իրենց պատրաստած ծրագրի, ապա միանալով մեզ՝ այցելել է հայկական եկեղեցիները եւ Ստամբուլի տեսարժան վայրերը, թանգարանները: Քանի որ մենք ունենք սահմանափակ ժամանակ, խնդրում եմ չկրկնել արդեն տրված հարցերը: Այժմ կարող եք տալ նրան ցանկացած հարցեր:

Հարց.- Վեհափառ տեր, Դուք այստեղ գտնվում եք որպես Ֆեների Հունևաց պատրիարքի հյուր: Նա ջանքեր է գործադրում Ձեզ եկեղեցական պատրիարքի հրավերով: Եկել եք հովվապետական այցով Կ. Պոլսի հայոց պատրիարքություն եւ երբայրական փոխադարձ այցն ենք կատարում նաեւ Տիեզերական պատրիարքությունում: Մեր հանդիպումների ընթացքում տեղի ունեցավ նաեւ մեր հոգեւորականաց հանդիպում, ուր քննարկեցինք մեր եկեղեցիները, որոնց շուրջ երկար ժամանակ արդեն բարակցություններ ընթանում են: Ժողովներ տեղի են ունեցել, եւ դրանք պիտի շարունակվեն: Տիեզերական պատրիարքին այցելության նպատակը մեր եկեղեցիների միջեւ եղբայրական կապերի ամրապնդումն ու զորացումն էր, ինչպես նաեւ մեր եկեղեցիների միջեւ առկա համագործակցության՝ նոր շնչով, նոր ջերմությամբ շարունակումը:

Հարց.- Ստամբուլի կուսակալի հետ Ձեր հանդիպման ժամանակ ասել եք, թե Դուք շատ գոհ եք, որ սկսվել են Երեւան-Ստամբուլ չվերթները, սակայն պետք է շարունակել նման քայլերը: ԻՆչ նկատի ունեք քայլեր ասելով:

Պատասխան.- Մենք գոհունակություն ենք հայտնել, որ Երեւան-Ստամբուլ չվերթներ են տեղի ունենում: Ինչպես գիտեք, Հայաստանի Հանրապետությունը՝ մեր երկիրը, տրամադիր է հարաբերությունները սերտացնել Թուրքիայի հետ, եւ դրանց արդյունքում, վստահ ենք, միաժամանակ, զուգահեռաբար լուծումներ պիտի կարողանանք փնտրել եւ գտնել մեր երկու ժողովուրդների հարաբերություններում առկա խնդիրներին: Ինչպես ծանոթ է ձեզ՝ ցեղասպանության հարցը:

Հարց.- Ինչպես քիչ առաջ անդրադարձաք, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ գո-

թյուն ունի ցեղասպանության հարցը: Մեսք, ի նկատի ունեմ Թուրքիայի հասարակական կարծիքը, չենք սահմանափակվում Հայաստանի հայերով, մենք տեսնում ենք հայերի 3 խմբավորում՝ սփյուռք, թուրքահայեր եւ Հայաստան: Ի՞նչ եք կարծում, Թուրքիան այս քննարկումների ժամանակ ո՞ւմ պետք է հաշվի առնի: Իսկ հայերն ո՞ւմ են հաշվի առնում՝ Թուրքիայի կառավարությա՞նը, թե՞...

Ինչպես գիտեք, Թուրքիայի որոշ մտավորական շրջանակներում քննարկվում է այս հարցը: Տարբեր համալսարաններում, հատկապես Բիլգի համալսարանում տեղի ունեցած գիտաժողովների ժամանակ, որին ներկա է գտնվել նաեւ հայոց պատրիարք Մութաֆյանը, քննարկվել է այդ հարցը: Ելնելով վերոնշյալից՝ ես կուզենայի ուղղել երկու տարբեր հարց. ովքե՞ր պետք է ներկայացնեն թուրքական եւ հայկական կողմերը, եւ ի՞նչ բայլեր պետք է արվեն: Իսկ երկրորդ հարցը. Դուք ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայում ժողովրդավարական քննարկման մթնոլորտը:

Պատասխան. - Մեսք մեկ ժողովուրդ եսք եւ աշխարհասփյուռ, սակայն պետականություն ունեցող ժողովուրդ: Եվ, բնականաբար, Թուրքիայի հանրապետությունն այդ խնդիրները կարող է քննարկել եւ լուծումներ գտնել ի դեմս Հայաստանի հանրապետության: 90 տարի է՝ աշխարհի գիտնականների կողմից ցեղասպանության խնդրին ուսումնասիրվում է: Բազում հատորներ են գրված: Մեր ժողովրդի համար ցեղասպանությունն ուսումնասիրման խնդիր չէ: Դա կատարված փաստ է, որը պետք է ճանաչել: Դա, բնականաբար, ցանկալի տարբերակն է, կամ կարող է ժխտական կեցվածք արտահայտվել երեւույթի նկատմամբ:

Եթե գիտական նման համաժողովները Այդ խնդիրներից են զորօրինակ կալվածագրման, ուսումնական գործընթացների կազմակերպման հարցերը եւ այլն:

Հարց.- Կաթողիկոսը նշեց, որ երկու պետությունները պետք է քննարկեն ցեղասպանության հարցը, սակայն վերջին ժամանակներում Թուրքիայում տեղի ունեցան քննարկումներ, որոնց մասնակցեցին նաեւ երկու թուրքահայ, այդ թվում՝ Հրանտ Դինքը: Ֆրանսիայում քննարկվող՝ ցեղասպանության փաստը հերքողներին քրեական պատժի ենթարկելու օրինագծի դեմ հանդես եկան 9 թուրք մտավորականներ, որոնք նամակ ուղղեցին Ֆրանսիային: Նրանք պնդում էին, թե ցեղասպանության մասին կարծիք հայտնելը չպետք է խնդիրներ առաջացնի: Սա մի օրինակ է այն փաստի, թե Թուրքիան եւ Հայաստանն այս հարցը քննարկելիս միայնակ չեն, այլ կան ուրիշ պետություններ, որոնք իրենց խորհրդարաններում որոշումներ են կայացնում ցեղասպանության վերաբերյալ: Այդ առումով հարցը ստանում է համաշխարհային բնույթ: Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ է այս գործին այլ պետությունների ներգրավումը:

Պատասխան. - Ցեղասպանություն՝ գործված որեւէ ազգի դեմ, չի սահմանափակվում այդ ժողովրդի կյանքի շրջագծում: Ցեղասպանությունը չի ճանաչում ազգություն: Ցեղասպանությունը համաժողովրդային տարողություն ունի: Եվ այդ իմաստով պետությունները, ազգեր, երբ նմանատիպ երեւույթներ աշխարհի որեւէ ծայրում կատարվում են, իրենց ձայնն են բարձրացնում, դատապարտում՝ կանխելու համար այդպիսի երեւույթները մարդկային կյանքից ներս: Միայն այդ ճանապարհով հնարավոր պիտի լինի զերծ պահել մարդկությանը նման ողբերգություններից: Իսկ հարցադրման առաջին մասը, թե միայն Թուրքիան եւ Հայաստանը պետք է այդ



Թուրքիայում նպատակ են հետապնդում Թուրքիայի հանրությանը խնդրոյ մասին լսելու, լուսաբանելու, ապա դա ողջունելի է: Եթե դա պատվեր է քաղաքական՝ ժխտողական գիծն ասած մղելու, բնականաբար, դա դրական ներգործություն չի կարող ունենալ խնդրի լուծմանը: Մեզ համար գոհունակության առիթ է տեսնել, որ թուրք հասարակական կյանքի մեջ ժողովրդավարական գործընթացներում այլեւս որոշակի կեղծով խոսվում, անդրադարձ է լինում առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած այս ցեղասպանության խնդրին:

Հարց.- Կաթողիկոսը Ստամբուլի կուսակալի հետ հանդիպման ժամանակ ասել է, թե «Թուրքիայի հասարակական կյանքում նկատվում է որոշ առաջընթաց: Եթե կատարվեն անհրաժեշտ քայլեր, ապա ամեն ինչ ավելի լավ է լինելու»: Այդ խոսքերը թարգմանել է Մութաֆյանը: Ինչե՞ր են պակաս Թուրքիայի հասարակական կյանքում, ի՞նչ նկատի ունեք:

Պատասխան. - Նահանգապետի հետ խոսակցության ընթացքում Մենք ասել ենք, որ ուրախ ենք, որ ազգային փոքրամասնությունների կյանքում, կրոնական փոքրամասնությունների կյանքում, թե՛ Հայ Առաքելական Եկեղեցուն, թե՛ Տիեզերական պատրիարքությանը վերաբերող հարցեր դրական լուծումներ ստանում են: Տեսնում ենք՝ տասնամյակներ շարունակ, որ հնարավոր չէր պատրիարքարանը նորոգել, այսօր պատրիարքարանը նորոգված է, եկեղեցիները բարենորոգվում են: Սակայն Մենք անդրադարձել ենք, որ առկա են մի շարք այլ խնդիրներ, որոնց լուծումը կնպաստեր համայնքային կյանքի առավել զորացմանը: հարցով զբաղվեն, կուզեինք մի փոքր ավելի լուսաբանել: Հայ ժողովուրդն ունի պետական նկատում: Իսկ խնդիրը վերաբերում է ողջ հայ ժողովրդին, աշխարհասփյուռ հայ ժողովրդին, յուրաքանչյուր անհատ հայորդուն: Բայց ազգի իրավունքները ներկայացնող մարմինը, իրավունքների երաշխավորը, բնականաբար, պետությունն է:

Հարց.- Կաթողիկոսն ասում է, որ ցեղասպանության հարցը Հայաստանի հասարակության համար ուսումնասիրման առարկա է, այլ իրականություն: Իսկ նման կեցվածքը արդյոք չի՞ խոչընդոտում հարցի լուծմանը, քանի որ թուրքական կողմը ժխտում է ցեղասպանությունը: Այսինքն՝ ցեղասպանությունը չի՞ կարելի ուսումնասիրել:

Պատասխան. - Բնականաբար, եթե Թուրքիան մերժում է, հնարավոր չէ հարցի լուծում: Եթե փաստը առկա է, փաստի առկայությանը ի՞նչ քննարկման անհրաժեշտության մասին կարող է խոսք լինել: Կամք պետք է դրսեւորվի այդ փաստը արձանագրելու, հաստատելու եւ ընդունելու:

Հարց.- Դուք ի՞նչ եք առաջարկում այս հարցի լուծման համար:

Պատասխան. - Մենք կարծում ենք, որ ինչպես բազմաթիվ պետություններ ու երկրներ, Թուրքիան նույնպես հնարավորություն ունի իր համար համապատասխան ուսումնասիրություններ կատարելու եւ այդ բազմաթիվ երկրների շարքը նույնպես լրացնելու՝ ճանաչելով հայոց ցեղասպանությունը: Ոչ մի այլ պետության հետ նման քննարկումներ Հայաստանն չի իրականացրել հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու առումով: Որովհետեւ փաստերն առկա են, փաստերը կարող են ուսումնասիրվել, եւ այդ փաստերի հիման վրա որոշում եւ կեցվածք որդեգրել. քննարկումների անհրաժեշտության խնդիր չի կարող լինել եւ որվել:

Հարց.- Դուք ասում եք, որ մարդկային կյանքում նման ցավերը չկրկնելու համար դրանք պետք է ուսումնասիրվեն եւ ընդունվեն: Իսկ Դուք երբեւէ հանդես եկե՞լ եք թե՛ Թուրքիային, թե՛ Հայաստանին շատ մոտ գտնվող Իրաքում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ: Ինչպես գիտեք, այնտեղ առկա է ԱՄՆ-ի միջամտությունը: Դուք ի՞նչ եք մտածում եւ անում այդ կապակցությամբ:

Պատասխան. - Ցավոք որպես Եկեղեցի վրդովմունք ենք ապրում եւ Մեր ձայնը բարձրացնում ամեն առիթով, երբ ձեռք է բարձրացվում Աստծո արարչագործության գերագույն արժեքի՝ մարդկային կյանքի նկատմամբ:

Հարց. - Դուք այցելեցիք Հեյբելի կոզու դպրեվանքը: Ի՞նչ եք մտածում, որ այժմ այդ դպրեվանքը չի գործում:

Պատասխան. - Ես ուրախ եմ ժողովրդավարական այս գործընթացներով, որ այսօր տեղի են ունենում Թուրքիայի Հանրապետությունում: Ես վստահ եմ, որ ժամանակի մեջ այդ բոլոր հարցերն իրենց դրական լուծումները պիտի գտնեն:

Հարց.- Հավանեցի՞ք Ստամբուլը:

Պատասխան. - Մենք Ստամբուլը տեսնելու հնարավորություն չենք ունեցել: Բայց այս օրերին մեր խոսքում ասացինք, որ Ստամբուլում շատ արժեքավոր եւ գեղեցիկ իրագործումներ առկա են: Սակայն ամենաարժեքավորը, ամենագեղեցիկը՝ մեր ժողովուրդն է, մեր համայնքը, որին մենք կատարում ենք մեր հովվապետական այցը: Որպես առաջնային խնդիր ունենալով այս, բնականաբար, մենք մեր ամբողջ ժամանակը տրամադրել ենք մեր ժողովրդի հոգեւոր կյանքի զորացման, նրա հավատքի ամրացման գործին: Բայց վստահ եմ, որ այլ առիթ կստեղծվի, եւ կկարողանանք լիարժեքորեն ժամանակ ունենալ եւ տեսնել տեսարժան վայրերը Ստամբուլի: Ինչպես, օրինակ, երեկ այցելեցինք Դոլմաբահչէ պալատը եւ նաեւ Այա Սոֆիա, որոնք մեծապես տպավորեցին մեզ:

Հարց.- Կա նման լուր, թե Դուք Այա Սոֆիայում ցանկացել եք աղոթել, բայց թույլ չի տրվել:

Պատասխան. - Նման երեւույթի Մենք ծանոթ չենք:

Հարց.- Ձեր այցի առաջին իսկ օրվանից տեղի են ունեցել բողոքի ցույցեր: Ի՞նչ եք մտածում այդ մասին:

Պատասխան. - Բողոքի ցույցերը որեւէ կերպով չեն անդրադարձել ոչ իմ տրամադրության եւ ոչ էլ իմ առաքելության վրա: Պիտի չցանկայինք, որպեսզի նման ցույցեր տեղ գտնեին մեր ժողովուրդների հարաբերությունների մեջ: Մեզ վերապահված է կողք կողքի ապրել որպես հարեւաններ, եւ պետք է հարեւան ժողովուրդների համապատասխան հարաբերություններ մշակել, կրթել, դաստիարակել: Վստահ եմ, որ հաջորդ հանդիպման նման ցույցերի չենք հանդիպի, ինչպես եւ նման արտահայտությունների: Իսկ եթե նույնիսկ նման ցույցեր էլ եղան, պիտի հասկանանք, որ մենք տակավին աշխատանք ունենք կատարելու, Մենք՝ ձեզ հետ միասին՝ նման երեւույթները բացառելու համար:

Հարց.- Եվրատեսիլ մրցույթի ժամանակ Թուրքիան 10 միավոր է տվել Հայաստանին: Ինչպե՞ս եք գնահատում այդ փաստը:

Պատասխան.- Որեւիցե ժխտական բան չեմ տեսնում:

Հարց.- Սա արդյո՞ք քայլ է Թուրքիայի կողմից:

Պատասխան. - Անշուշտ, քայլ է, որ պետք է գնահատել դրական կերպով: Տա Աստված, որ այդ դրական ընթացքն առաջնորդի մեզ դեպի հիմնական խնդրի լուծում:

Հարց.- 1961 թ. մինչ այժմ նման իրադարձություն տեղի չէր ունեցել: Չնայած Ձեր այցը կրում է ոչ պաշտոնական բնույթ, հյուրընկալվեցիք Ստամբուլի կուսակալի կողմից: Ի՞նչ եք մտածում այդ մասին: Նման հյուրընկալությունը Դուք գնահատո՞ւմ եք որպես դրական քայլ: Եղե՞լ են այլ հյուրընկալության առաջարկներ: Եթե այո, ապա ի՞նչ պատճառով տեղի չեն ունեցել:

Պատասխան. - Մենք նահանգապետի հետ մեր հանդիպումը ընկալում ենք որպես նահանգապետի կողմից հայ համայնքի նկատմամբ դրսեւորած գնահատանք՝ Թուրքիայի հասարակական կյանքում նրա ունեցած կարեւոր ծառայությունների, ներդրման համար: Մենք որեւէ առարկություն չենք ունեցել եւ չունենք՝ որեւէ պետական գործի հետ հանդիպելու, եթե նման առաջարկ արվում է Մեզ մեր համայնքի կամ որեւէ այլ կառույցի կողմից: Ժամանակին գաղափար կար հանդիպում կազմակերպելու Թուրքիայի կրոնպետի հետ, սակայն այն կյանքի կոչել հնարավոր չեղավ: Պարզապես իրավիճակները, մեր ժամանակացույցի ծանրաբեռնվածությունը հնարավորություն չտվեցին:

Կուզեմ շնորհակալություն հայտնել այս հանդիպման եւ այսպիսի ազատ զրույցի համար: Ամենայն բարիք ձեզ:

ՄԱՅՈ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Սկիզբը՝ թիվ 9-11

«Մարդը ափի մեջ» գրքի բանաստեղծական շարքերին իր նամակներից մեկում Պ. Սեւակը հետաքրքիր մեկնաբանություն: Նա դժգոհ է ազգային-հայրենասիրական բովանդակություն ունեցող «Անլռելի զանգակատուն», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմներով ու «Հարկ հոգեկան» շարքի բանաստեղծություններով իրեն գնահատողներից՝ դրանց համընդհանուր հաջողվածության գաղտնիքը համարելով հայկական թեման, «հայի հոգուց խոսելը», այն, որ, «միջակ ու դրանից բարձր ու ցածր ընթերցողները համագումարվում են, համաձայնակավորվում, եւ ... Պ. Սեւակը շահում է ... Իսկ աշխատել միմիայն հայկական թեմայով՝ նշանակում է ոչ միայն կամտային ինքնասպան լինել, այլեւ ինքնասպանության տանել հենց ողջ հայկականը» (տե՛ս նույն տեղը, էջ 416-417): Իր մասին եւ ազգային բովանդակությամբ գեղարվեստի մասին անարդարորեն այսպես էր մտածում Պ. Սեւակը, որովհետեւ ինքն էլ էր ձգտում Շարենցի նման ունենալ համաշխարհային հորիզոն ու լսարան: Քիչ ավելի ուշ՝ «Եղիցի լույս» գրքում, նա յուրովի է լուծում հայկական համամարդկայնության խնդիրը: Արվեստագետները, մանավանդ բանաստեղծները, նրա համոզմամբ՝ հիվանդ են մի տեսակ *ճառագայթային ախտով.* աշխարհում այդ ախտով հիվանդ իրական մեծությունները մերն են, մերն է՝ աշխարհինը.

Ճառագայթային այս ախտը բնավ նո՛ր չէ,
բարեկա՛մ.
Նա նորածի՛ն չէ,
Այլ առնվազն ութ հազար եւ ութ հարյուր
տարեկան:
Այդ ախտով էին տակավին հիվանդ
Հին հելլենացիք, հնդիկները հին:
Եվ Հոմերոսի կուրությունն իրոք այդ
ախտից էր հենց:
Եվ այդ նույն ախտով գերեզման իջան
Ձե՛ր Նարեկացին, Շեքսպիրը մե՛ր,
Ու բոլո՛ր նրանք, ովքեր թոք ունեն՝
Մեր մոլորակի կիսագնդերի մեծության
չափով
Կամ այնքան մեծ սիրտ,
Որ գրավում է տեղն էլ թոքերի...
... Ճառագայթային այս հիվանդությամբ
տանջվում են նրանք,
Լոկ նրա՛նք,
Ովքեր մենակության մեջ
Միանգամից են ողջ մարդկության հետ
նստում զրույցի.
Լոկ նրա՛նք,
Ովքեր այս Երկրագնդի պտույտն
զգում են կրունկո՛վ իրենց,
Եվ արմըտիքի աճումն զգում են իրենց
ափերո՛վ,
Եթե մինչեւ իսկ իրենց ափերը պահում են
օդում.
Լոկ նրա՛նք,
Որոնց չեն կարողանում ոչ մի կերպ սիրել
Բոլո՛ր դարերի արքաներն ամեն
Եվ կործանում են սրանց ո՛չ միայն
աքսորով, բանտում,
Այլ նաեւ սրանց պալատ բերելով
Ու ...սուտ սիրելով ...

Պ. Սեւակ բանաստեղծը պիտի լուծեր իր եւ ժամանակի հարաբերության խնդիրը: Շարենցյան «Թե ուզում ես երգդ լսեն՝ դա-ժամանակիդ շունչը դարձիր» պատգամը դեռ վաղ հասակից յուրացրած Պ. Սեւակը հասուսեալ էր այնքան, որ առաջադրում էր իր բանաձեւը «Լիսել Ժամանակից՝ չի նշանակում լինել ժամանակին կից»: Եվ իրոք, Պ. Սեւակը ժամանակի գերին չէր, այլ դարին ու ժամանակին ուղի եւ ընթացք տվող, ժամանակից առաջ ընկած հզոր անհատականությունների մեկը, որը գեղագիտական նի հետ միասին առաջադրում էր համազգային խնդիրներ:

«Անլռելի զանգակատնով» նա աշխարհին ներկայացրեց Կոմիտասին, «Եվ այր մի» պոեմով՝ Մեսրոպ Մաշտոցին, իր դոկտորական ատենախոսությամբ՝ Սայաթ-Նովային, մտադիր էր ներկայացնել նաեւ Նարեկացուն ու միջնադարի մյուս տաղերգուներին: Մաշտոցը եւ Նարեկացին հասկանալի են, բայց արտաքուստ կարող է տարօրինակ թվալ Կոմիտասի եւ Սայաթ-Նովայի նկատմամբ գրեթե հավասար բուռն հետաքրքրությունը: Տարօրինակ՝ զուտ այն իմաստով, որ խնդիրն առնչվում է աշուղական բանաստեղծությանն ու երաժշտությանը:

Կոմիտասյան դասականություն եւ *սայաթնովյան աշուղականություն* թվացյալ հակադրությունը ինչպե՞ս էր համատեղում ինքը՝ Պ. Սեւակը: Դա իրոք թվացյալ հակադրություն էր, որովհետեւ բանաստեղծության մեջ հնացած աշուղականության դեմ մարտնչող Պ. Սեւակը կողմնակից էր աշուղական մեջ բանաստեղծությանը եւ հիացած էր Սայաթ-Նովայի՝ աշուղական ձեւերի մեջ դրսեւորած բանաստեղծական հանճարով: Այս պատճառով է, որ Սայաթ-Նովայի կենսագրության, մանավանդ նրա ծննդյան տարեթվի շուրջ Պ. Սեւակի հետ վիճողներ եղան (թեեւ Լ. Դուլյան սայաթնովասերը երգչի թուրքերեն խաղերի ծածկագրերի՝ թուրքական տառերի հենց թուրքական, ո՛չ արաբական թվահամարների կիրառմամբ՝ նոր վերծանումներով հաստատում է Պ. Սեւակի ճշմարտացիությունը), սակայն նրա խաղերի գեղագիտական վերլուծման ու արժեւորման հետ ոչ ոք չի վիճում ու հակադրում:

«Մարդը ափի մեջ» գրքով հեղինակն ընթերցողին ներկայանում էր որպես մեծ մարդագետ՝ մարդուն առնելով ափի մեջ, այսինքն՝ իր համակողմանի տեսադաշտում, եւ իր պոետական հզոր լուսարձակով զննում ու դիտարկում էր նրան բոլոր կողմերից, բացահայտում մարդկային էության բոլոր խորշերն ու շերտերը՝ արժեւորելով նրա հոգեւոր էությունը, մտածողությունն ու նկարագրի հատկանիշները՝ փրելն ու ատելը, կասկածելն ու մեծամտանալը, հրապիրել-ուրախանալն ու ողբալը, հիասթափվելն ու հավատալը, խոստանալն ու հպարտանալը, գժվելն ու խանդելը:



Գործ՝ Ս. Մուրադյանի

ԻՆչ կարող էր խոստանալ խորհրդային երկրի պատացած օրենքները ճանաչող քաղաքացին.

Խոստանում եմ
Բաց ճակատով զուր չխփվել հաստ
պատերին:
Ինչի՞ համար,
Էլի՛ պատը կմնա պատ,
Կպակասի մի լավ ճակատ:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ

(1081 - 1105-1113)

Սկիզբը՝ էջ 3

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահով հայրապետաց ըմբոխնի խնդիր չծագեց, քանի որ 1081 թվից կաթողիկոսական ձեռնադրություն էր ստացել Բարսեղ Ա Անեցին: Նա Ապիրատ Պահլավունու եւ Վկայասերի քրոջ որդին էր, որը Վկայասերի օրինական պարոնայիկն էր եւ գործակիցը եւ կաթողիկոսական լիարժեք իշխանություն էր վարում: Ամուսնալույս նա մասնակցեց իր մորեքրոջ բարկանը՝ Կարմիր վանքի այդ շրջանում, եւ Քեռուձի Կարմիր վանքը, որ ստացել էր Շուղր ամուսնը, կարծես բե բոլորի կողմից դիտվում էր հայրապետանոց, ուստի Բարսեղ Ա Անեցին որոշեց թողնել Անին եւ հաստատվել Գող Վասիլի իշխանությունում: Բարսեղը հոգ տարավ Վկայասեր կաթողիկոսի քրոջ որդիներին՝ Գրիգորին եւ Ներսեսին, որոնք Ապիրատ իշխանի որդիներն էին եւ իր մորաքրոջ թոռները՝ ապահովելով նրանց կոչմանն արժանի կրթություն: Նրանցից առաջինն այդ ժամանակ 12 տարեկան էր, իսկ երկրորդը՝ 7: Երեխաներն ուղարկվեցին Քեռուձի կամ Շուղրի Կարմիր վանք եւ հանձնվեցին նրա վանահայր Ստեփանոսի խնամակալությանը, որին երիտասարդ հասակում ձեռնադրել էր Բարսեղ կաթողիկոսը, եւ որը հայտնի է նաեւ Մանուկ անունով: Կարմիր վանքը մեծ հռչակ ստացավ իր սաներով, որոնցից հիշատակության արժանի են Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը եւ նրա եղբայր Ներսես Շնորհալին՝ վերը հիշված Գրիգորն ու Ներսեսը: Հռչակավոր սաներից էին նաեւ Իգնատիոս Շնորհալին, Սարգիս Շնորհալին, Բարսեղ Շնորհալին եւ ուրիշներ: Մ. Օրմանյանն անգամ հակված է կարծելու, որ Շնորհալի մականվան կրկնությունը ենթադրել է տալիս, որ այն որոշիչ պատվանունն է եղել Շուղրի կամ Կարմիր վանքի աշակերտների համար, ինչպես Քերթող պատվանունը հատուկ էր Սյունյաց, կամ Իմաստասեր՝ Անրագծոտնի դպրոցներին: Ամառաբակոյս Ստեփանոս վանահայրը մեծ աշխատանք է կատարել Շուղրում՝ հատկապես դպրոցական կյանքի զարգացման ուղղությամբ, սակայն, դժբախտաբար, պատմությունը մեզ նրա անունով աշխատություններ չի պահպանել: Կորե՞լ են դրանք, թե՞ պարզապես մա չի գրել, դժվար է ասել, սակայն նրա պատրաստած աշակերտները բավական են նրան եկեղեցական նշանավոր գործիչների շարքը դասելու համար, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Օրմանյանը: Ըստ այդմ, հայկական արծաթի դարի մեջ նա իր որոշակի լումա ունի:

Հարկավ պետք է ենթադրել, որ Բարսեղ Անեցին հարազատեց մինչ այդ ունեցած իր աշխույժ գործունեությունը: Յավոք, Վկայասերից հետո նրա գործունեությունը շատ կարճ եղավ, իսկ նրա եկեղեցական ձեռնարկների մասին պատմությունը հիշատակներ չի պահպանել: Ներսես Շնորհալին, որ մեծ ակնածանք ուներ Բարսեղ կաթողիկոսի նկատմամբ եւ մեծապես երախտապարտ է նրա կողմից իրեն ցուցաբերած խնամակալության համար, նույնպես ոչինչ չի հայտնում եւ լոկ գովաբանում է Մելիքշահի տված ազատությունները: Թերեւս պատճառն անհանգիստ ժամանակներն էին, որոնք ստիպում էին կաթողիկոսին չհեռանալ Քեռուձի իշխանությունից, իսկ անընդհատ պատերազմները հնարավորություն չէին տալիս նրան այցելել իր թեմերը: Սելջուկյան սուլթան Մուհամմեդ Տափարը (Մափար) հաճախակի արշավում էր դեպի արեւմուտք՝ ավելորդ Ասորիքում եւ Կիլիկիայում հաստատված լատինական եւ հայկական իշխանությունները: Դրանք ոչ այնքան աշխարհակալական, որքան ավարառուական եւ շարունակական կոտորածների բնույթ ունեին: Ըստ որում, սելջուկների արշավանքների հաջողությունները շատ հաճախ կախված էին լատինական իշխանությունների միջեւ տեղ գտած բշնամական հարաբերություններից: Բարդ էր հայերի կացությունը: Այլազգիներին բշելու համար նրանք երբեմն ստիպված էին օգտվել լատինների օժանդակությունից, սակայն ծանր նեղություններ կրելով խաչակիրներից՝ հաճախ նրանք այլ ելք չունեին, բացի այլազգիների հետ համագործակցելուց: Այսպես, օրինակ, հայերն այնքան էին զզվել ուխտարդում խաչակիրներից, որ Ալբիսատ քաղաքում դաշնակցելով այլազգիների հետ՝ ֆրանկ զորահրամանատարին հայտարարեցին, թե վերցրու քո ազգն ու գնա, իսկ Ուռհայում պարտավորվեցին հազար դահեկան վրկագին վճարել իրենց մաոնաջնորդ արքեպիսկոպոս Ստեփանոսի համար, որին խաչակիրները պատրաստվում էին կուրացնել: Մինչեւ 562 թ. սահմի ամսի 20-ը, այսինքն՝ մինչեւ 1113 թվականի մայիսի 9-ը խաչակիրներն ամեն տեսակի այլանդակություններ գործեցին Ուռհայում՝ չարությամբ հատուցելով հայերի օգնության դիմաց: Լատինները, որ Արեւելք էին եկել իբրեւ թե քրիստոնեությունը պաշտպանելու համար, երբ բավականաչափ զորեղացած հայերի եւ տեղացի մյուս քրիստոնյաների օգնությամբ, այլեւս ձեռնամուխ եղան նրանց երկրներին տիրելու գործին: Հայկական շատ իշխանություններ ընկան: Միայն Կոմագենի եւ Արեւելյան Կիլիկիայի շրջանում շարունակում էր իր գոյությունը պահպանել Գող Վասիլի իշխանությունը, իսկ Լեռնային Կիլիկիայի շրջանում ուժեղանում եւ ամրապնդվում էր Թորոս Ռուբինյանի իշխանությունը: Անշուշտ պետք է ենթադրել, որ նրանց ամենալավ խորհրդատուն կաթողիկոսն էր, որի ջանքերով հայկական նոր գաղթականություններ էին գալիս հաստատվում հիշյալ իշխանություններում:

Այլ էր վիճակը բուն Հայաստանում եւ Այսրկովկասում, որտեղ աստիճանաբար սկսեց բարձրանալ Վրաստանը: Վրաց թագավոր Դավիթ Բագրատունին (վրացերեն՝ Բագրատիոնի), որը Գեորգիի որդին էր եւ Բագարատի բոռը, կարողացավ իր տիրույթներին միացնել Ափխազաց թագավորությունը, Կյուրիկե թագավորի տիրույթները Լոռիում, Տփղիսի մահմեդական ամիրությունը եւ ծանր հարվածներ հասցնել Գանձակին: Նրա հրամանով 500 սրահանգ ավազակներ կախաղան բարձրացվեցին:

Շարունակությունը՝ էջ 7

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



Սկիզբը՝ էջ 4

Կորյունի բացատրությունը, թե Մարաց կողմերը դժվարամատչելի էին ոչ միայն «վսան դիւական սատանայակիր բարուց ճիւաղուութեան, այլ եւ վասն խեցբեկագոյն եւ խոշորագոյն լեզուին»,– իհմք չի կարող լինել, որ առաջինը հենց այդ կողմերում սկսվեր կրթությունը, որովհետեւ չափազանց անկիրթ ու վայրենի միջավայրը բոլորովին էլ հարմար տեղ չէ նորաստեղծ այբուբենը փորձելու համար, չխոսելով արդեն անակնկալ վտանգների մասին: Բացի այդ, Սյունիքում եւ այլուր նույնպես կայնի, Կորյունի խոսքով, «առաւել զազանամիտ, վայրենագոյն, ճիւաղարարոյ» (Կոր. [ԺԳ], էջ 60) վայրեր, որ Վաղարշապատից այդչափ հեռու չէին, եւ որտեղ Մաշտոցը կարող էր ապելի ապահով կրթել:

Ոչ պակաս տարօրինակ է, որ հեռավոր Մարաց կողմերից Վաղարշապատ վերադառնալով՝ Մաշտոցը Սահակ կաթողիկոսի հետ նոր միայն սկսում են «աստվածային մշակության գործը, ավետարանական արվեստը բարգմանել, գրել եւ ուսուցանել» (Կոր. [ԺԱ], էջ 54): Իսկ երբ իրերի (այսինքն՝ գրերի) հաստատությունը ստուգացին, «ավելի համարձակ ու ավելի շատ էին նորապատ ուսման համար աշակերտներ հավաքում (Վաղարշապատում)՝ սովորեցնելու, կրթելու եւ պատրաստելու անգնա մարդկանց քարոզիչներ» (Կոր. [ԺԲ], էջ 58 (բարգմանությունն իմն է): Այնուհետեւ երանելի Մաշտոցը համաձայնություն առավ, որ Սահակ եպիսկոպոսը, կայնեւկանների մեջ (այսինքն՝ արքունի կայանում եւ ազատագունդ բանակում) սերմանի կենաց խոսքը, իսկ իսկ ինքը՝ հեթանոսների սփյուռքում (Կոր. [ԺԳ], էջ 60): Որից հետո Մաշտոցն ուսուցանելու գնաց Գողոթն եւ Սյունիք: Այստեղից պարզվում է, որ «հեթանոսների սփյուռք» ասելով՝ Կորյունը նկատի ունի մայրաքաղաքից ոչ շատ հեռու գտնվող Գողոթ ու Սյունիք գավառները: Եվ, ուրեմն, ի՞նչը պետք է ստիպեր Մաշտոցին՝ առանց մայրաքաղաքում նոր գիրն ուսուցանելու, առանց նույնիսկ գրերի հաստատությունն ստուգելու եւ, վերջապես, նախքան մոտակա «հեթանոս սփյուռքը» կրթելը, գնալ հասնել հեռավոր հեթանոս գավառները, որտեղ հայտնվելն անգամ վտանգավոր պիտի լիներ քրիստոնյա վարդապետի համար, եւ առաջինը նորագրաված այբուբենով կրթելու Մարաց կողմերը (*Մարաց կողմերի ուսուցման ղրվագը (Կոր. [Ժ], էջ 54), իսկապես մի տեսակ մեկուսի դիրք է գրավում Մաշտոցի կրթած մյուս գավառների նկատմամբ ոչ միայն նրանով, որ քնագրում հեռու է ընկած ղրանցից (Գողոթ – [ԺԳ], Սյունիք – [ԺԴ], այլ հատկապես նրանով, որ Մաշտոցը այդ գավառները «սփիւռս հեթանոսաց» ուսուցանում է սուսկ Սահակ կաթողիկոսի հավանությամբ, եւ միայն Մարաց կողմերի կապակցությամբ է Վռամշապուհ թագավորը հրամանի տալիս սկսելու կրթությունը նորագրաւտ հայերեն նշանագրերով: Կարելի է ենթադրել, որ Մարաց կողմերում ապաստանած Գողթան քրմերի համար Վռամշապուհ թագավորի հրամանն ավելի ազդեցիկ էր եւ վստահության արժանի, քան քրիստոնյա հովվապետի հրահանգը: Այլ բացառություն չգտնելով, որոշ ուսումնասիրողներ այն կարծիքն են հայտնել, իբր Կորյունի քնագրում առանձին ղրվագներ ենթարկվել են տեղաշարժման: Ն. Ակինյանը Կորյունի «Պատմութիւն վարուց Մ. Մաշտոցի» հրատարակության մեջ (Վիեննա, 1952) անհիմն կերպով վերաձեւում է Կորյունի քնագիրը՝ աղվանական գիր հորինելու եւ ամբողջ Աղվանքն ուսուցանելու [ԺԵ] հատվածը տեխադրելով Մ. Աբեղյանի [ԺԱ] հատվածի տեղում՝ Բաղասական կողմերի վարդապետության հետ, իսկ Բաղասական կողմերից առաջ մտցնում է Մարաց կողմերի ուսուցման [Ժ] հատվածը: Արդյունքում ստացվում է, որ Մաշտոցը Գողթնում եւ Սյունիքում նորագրաւտ այբուբենը տարածելուց հետո անմիջապես ստեղծում է Աղվանից գիրը եւ Աղվանք գնալով կրթում է տեղի քնակիչներին, ավելի վաղ, քան վրաց գիրը հորինելն ու Վիրքը կրթելը եւ նախքան Հռոմմց Հայաստանում հայոց գիր տարածելը: Այսպիսի եռեւառաջությունը ոչնչով արդարացված չէ: Ըստ Ն. Ակինյանի՝ «վղոմամք Մարաց» գավառը չպետք է շփոթել Մարաց ամոր աշխարհի հետ (նույն տեղում, էջ 91). նա Մարաց կողմերը տեղադրում է Աղվանքում՝ Բաղասական կողմերին կից, իսկ մարերին իրենց «խեցբեկագոյն եւ խոշորագոյն» լեզվով (ըստ Կորյունի բնորոշման) նույնացնում է Աղվանքի բուն բնակիչների՝ զարգարաքիների հետ միայն նրա համար, որ սրանց լեզուն եւս Խորենացին անվանում է «վղոլորդաիսօս, աղխազուր, խժաւալ, խեցբեկագոյն» (Խոր. Գ. ԾԳ.): Այս կետում Ն. Ակինյանը կարծես ուրշակի կռվան ունի: Բայց այդ դեպքում էլ դուրս է գալիս, որ Աղվանքում բազում մանուկներ կրթելուց եւ աստվածային գրքերը թարգմանելուց հետո, երբ «մի ակնքարթում Աղվանքի վայրենամիտ եւ դատարկասուն եւ անասնաբարո մարդիկ մարգարեագետ, առաքելածանոթ եւ ավետարանաժառանգ դարձան» (Կոր. [ԺԷ]), հանկարծ միանգամայն անտեղի ասվում է (ըստ Ն. Ակինյանի նորամեծության), թե Մաշտոցը «թագավորից հրաման առավ սկսելու ուսուցումը Մարաց խուժադռում կողմերից»: Էլ ինչպես կարող էին մարերը նույն գարգարացի աղվանները լինել:

Մաշտոցի անվան Մատենադարանի եղկարամյա ձեռագրագետ, արժանահիշատակ Արտ. Մաթեւոսյանը «Վարք Մաշտոցի»-ի նոր խմբագրության մեջ, իր նպատակին հարմարեցնելով, Մարաց կողմերի ուսուցման ղրվագը Կորյունի քնագրի [Ժ] հատվածից փոխադրել է [ԺԴ] հատվածի սկիզբը՝ Գողթան գավառից հետո եւ Սյունիքից առաջ: Դրանով իսկ Արտ. Մաթեւոսյանը խախտում է ոչ միայն Կորյունի քնագիրը, այլեւ Վռամշապուհ թագավորի հրամանը, ըստ որի՝ Մաշտոցն առաջինը պետք է Մարաց կողմերից սկսեր նորագրաւտ նշանագրերով կրթելը. «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ սկիզբն առնելոյ զխուժադռում կողմանսն Մարաց» (Կոր. [Ժ], էջ 54): Մինչդեռ, ըստ նոր խմբագրության, Մաշտոցը Գողթան գավառը ուսուցանելուց հետո է միայն շտապփոյթ հրաման ստանում թագավորից կրթությունը սկսելու մասին (Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, [ԺԴ], հրատ. Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1994, էջ 94): Երկրորդ արտառաց վրիպումը, որ թույլ է տրվել նշված տեղափոխությամբ, պետք է հարուցեր պատմական աշխարհագրության մասնագետների անհամաձայնությունը: Կորյունի քնագրում Մաշտոցը նախ ուսուցանում է Գողթան գավառը, ապա անցնում սահմանակից Սյունիք, ուստի եւ Կորյունն իրավունք ուներ գրելու. «Ապա յետ այնորիկ (Մաշտոց) ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհս ելանէր» (Կոր. [ԺԴ], էջ 60): Բայց երբ Ա. Մաթեւոսյանը Մարաց կողմերը բերում մտցնում է Գողթնի եւ Սյունիքի միջեւ, ապա այլեւս չի կարելի ասել, թե Մարաց կողմերից Մաշտոցը «ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր», որովհետեւ Մարաց կողմերը գտնվում էին Ատրպատականի սահմանում (տե՛ս սույն հատվածի 48 ծանոթ.) եւ տեքստի սխալ փոխադրման հետեւանքով Պարսպատունիքը բյուրիփմացաբար դառնում է Սյունիքին սահմանակից):

Շարունակելի

Այբերտ ՍՈՒՐԵՆՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Սկիզբը՝ էջ 5

Գեղագիտական ծրագիր ներկայացնելը եւ առհասարակ որպես հանդուգն, ինքնատիպ բանաստեղծ ներկայանալը հաեմատաբար անվտանգ էր, թեեւ այստեղ էլ կային լուրջ բարդություններ՝ կապված խորհրդային կաղապարներից ու պարտադրանքներից ակնհայտ շեղումների հետ: Ավելի դժվար էր հա՛յ բանաստեղծ եւ մանավանդ ազգության՝ բանաստեղծ ներկայանալը, մեր ազգային ցավերն ու երազանքները բանաստեղծությամբ արտահայտելը: 1963 թ. լույս տեսած գրքում բանաստեղծությունները կան, որոնք կարող էին նույնիսկ այսօր գրվել ու լինել արդիական: Ահա դրանցից մեկը՝ «Մատնիչ ցանկություն» խորագրով.

Ի՞նչ դառնամ:
Դառնամ
Ոչ միայն խորունկ հանքահորերում
Օդափոխություն,
Հքանչանի գունեղ ժապավեն՝
Իմ հողը փրկող հերոսի կրծքին,
Այլ նաեւ դառնամ գերիգոր թեւեր՝
Սիրամարգերի՞ն,
Որ երկի՞նք սուրան
Եվ ոչ թե քայլեն լոկ հողի վրա:

Ուշադրություն եմ հրավիրում բանաստեղծի բացորոշ արտահայտված երազանքի վրա. ուզում էր դառնալ շքանշանի գունեղ ժապավեն՝ իր հողը փրկող հերոսի կրծքին. այդպես մեկը այսօ՛ր կարող ենք մտածել, Պ. Սեւակը՝ կես դար առաջ: Իսկ «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմն ու «Ցարկ հոգեկան» խորագրով շարքը, որը ներառում է նրա ազգային ոգու եւ մտածողության բարձրագույն եւ առնական դրսեւորումներից մեկը՝ «Խոսք հավատիքի» բանաստեղծությունը, նվիրված են Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին: Իսկ հիշյալ բանաստեղծությունը 1960-ականների սկզբին ուներ առանձնահատուկ սուր հնչողություն, ճանաչողական հետ միասին՝ նաեւ քաղաքական արժեք ու կշիռ եւ հնչում էր որպես ազգային զարթոնքի եւ համայն հայության համախմբման կոչ.

Աշխարհազբոսիդ համեմատությամբ
Եւ՝ մինչեւ անգամ Արաքս չտեսած
տնաբնակը,
Ի լրո՛ գիտեմ,
Որ քեզ ծին տված բնիկ գավառում
Կար մի մենաստան՝
«Սուրբն Կարապետ»,
Որի դռները փակ էին ընդմիշտ կանանց
սեռի դեմ:
Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Սակայն անօրեն մի նոր օրենքով
Փակ է մեր առջեւ
Ոչ միայն դուռն ու գավիթը վանքի,
Այլ գավա՛ռն ամբողջ
Եվ ողջ մի երկիր,
Որի անունից զրկված է նույնիսկ
քարտեզը հիմա:
Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Եվ ընդդեմ այս բաց անարդարության
Առայժմ մենք մեր աչքերն ենք փակում,
Բայց փակում այնպես,
Ինչպես փակում են մարդիկ մատները,
Եվ ստացվում է դրանից ... բռունցք:

Իր գեղագիտական ու գաղափարական հարցադրումներով «Մարդը ափի մեջ» գիրքը գրական շրջանակներում առաջ բերեց մի քանի տարի տեւող բուռն բանավեճեր, որ շոշափվում էին բանաստեղծության էության, ավանդապահության ու նորարարության, «ինչ»-ի եւ «ինչպես»-ի եւ «որպես»-ի, այսինքն՝ պոեզիայի մեջ ձեւի եւ բովանդակության հարաբերակցության խնդիրները:

Հենց այդ բանավեճերի թոհուբոհի մեջ էլ ծնվեց Պ. Սեւակի վերջին՝ «Երգի՛ր լույս» ժողովածուի բանաստեղծությունների գգալի մասը, ժողովածու, որը տպագրվեց 1969-ին, բայց ուեւեցավ ճիշտ ու ճիշտ Չարենցի վերջին մատյանի՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի ճակատագիրը: Չարամիտ զրպարտիչների մի հնգյակի հրահրմամբ՝ այն տպարանից ուղարկվեց ոչ թե ընթերցողին, այլ արգելվեց ու վերցվեց կալանքի եւ մի քանի բանաստեղծությունների հանում-հոշոտում-կրճատումով լույս տեսավ 1971-ին՝ հեղինակի եղերական մահից հետո:

«Երգիր լույսը» ստեղծագործական մեծ խիզախում էր, պոեզիայի պարուրբեւակայան տեսական ըմբռնումների գործնականը, ուր դրսեւորվում էին նրա պատկերավոր մտածողության բոլոր էական ու կարեւոր առանձնահատկությունները՝ զգացմունքով շաղախված մտքի ուժգնությունը, դարի արատների՝ խավարի եւ անորոշության դեմ ազնիվ ու մոլեգին կռիվը, լույսի հաղթանակով մութը հերքելու նարեկացիական ձգտումը, մեր ժողովրդի մարդկային արժանապատվության ու ազգային պահանջատիրության բանաստեղծականացումը:



Գործ՝ Ս. Մուրադյանի

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Կիր մեջայակում

. Եկեղեցու սուրբ հայրերի ուսուցման համաձայն՝ Աստված մարդուն ստեղծել է հավիտենության համար՝ մարդու բնության մեջ դնելով անմահության, փառքի ու հանգստության փափագ: Սուրբ Գիրքը հստակ ասում է, որ «մենք ծնված ենք անեղծ ու անարատ ու անթառամ ժառանգության համար, որ պահված է երկնքում մեզ համար» (հմմտ. Ա Պետ. Ա 4): Նաեւ Պողոս առաքյալն է ասում, որ «մեր քաղաքացիությունը երկնքում է» (Փիլ. Գ 20), այսինքն՝ մենք հյուր, պանդուխտ ենք այս աշխարհում:

Ցավալի է, բայց իրականություն, որ շատ-շատերն այսօր հավիտենական կյանքի մասին գաղափար անգամ չունեն եւ չեն էլ պատկերացնում, որ ամեն ինչ լի սահմանափակվում այս կյանքով:

Տե՛ր հայր, եւս մեկ անգամ փորձենք հասկանալ, պարզել, թե ինչ է հավիտենական կյանքը:

- Մեր Եկեղեցու բանաձեւի՝ Հավատո հանգանակի վերջին հատվածում ասվում է. «Հավատում ենք նաեւ .... մեռելների հարությանը, հոգիների եւ մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանը եւ հավիտենական կյանքին»: Միանշանակ է, որ այս հավատքը յուսեցող մարդը չի կարող քրիստոնյա կոչվել: Եկեղեցու սուրբ հայրերը Հավատո հանգանակը կազմել են Սուրբ Գրքի վրա հիմնվելով: Հովհաննես Ավետարանն ասում է. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ունդուկի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16): Նույն գլխի վերջում ասվում է. «Ով հավատում է Որդուն, ունդունում է հավիտենական կյանքը, իսկ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծու բարկությունը» (Հովհ. Գ 36): Ուրեմն հավիտենական կյանքն Աստվածաշնչի մեջ արձանագրված իրողություն է: Մարդը ստեղծված չէ մեռնելու համար, այլ հավիտենապես ապրելու: Ադամն ու Եվան դրախտում այդպես պետք է ապրեին, սակայն մեղքը եղավ մահվան պատճառ: Մահը ներդաշնակության խաթարումն է: Մարդը զրկվեց Աստծու հետ անմիջական հարաբերությունից, սակայն երբեք չհաշտվեց մահվան հետ: Ինչո՞ւ: Մարդու էության խորքում կա հավիտենական կյանքի կարոտը, գիտակցումը: Գիտությունն այսօր քանքեր է գործադրում մարդու կյանքը մի փոքր երկարեցնելու համար, սակայն մահն անխուսափելի է, քանի որ Աստված ասաց. «Հող էիր եւ հող էլ կդառնաս» (Ծննդ. Գ 19): Բայց մահը վերջը չէ: Միայն քրիստոնյան է գիտակցում, որ մահն ընդամենը սահման է, որից հետո մարդուն մի այլ գոյաձեւ է սպասվում՝ հավիտենական կյանքը: Մեռելների հարությանը հավատալով՝ նաեւ հեթանոսաբար չենք կոծում մեր հարազատների կորստի դեպքում: Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված իր առաջին թղթում մանրամասն խոսում է հարության մասին (տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 1-58): Իսկ սուրբ Բ. Կեսարացին այսպես է բնորոշում հավիտենական կյանքը. «Ողջերի երկիր է դա. այնտեղ չկա ոչ գիշեր, ոչ քուն, որը մահվան պատկերն է, չկան նյութական կերակուրներ, որ մեր տկարության ապացույցն է, չկան հիվանդություններ, չկան ցավեր, չկան հիվանդանոցներ, դատարաններ, առեւտուր, արվեստ, դրամ չկա, որը չարիքի սկիզբն է, պատերազմների պատճառը, թշնամության արմատը: Դա ողջերի երկիր է, ուր մարդը չի մեռնում մեղքի պատճառով, այլ ապրում է ճշմարիտ կյանքով՝ Հիսուս Քրիստոսով»:

- Տե՛ր հայր, շատերն ասում են, որ հավատում են Աստծուն, բայց քամահրում են մահվանից հետո կյանքի գոյության միտքը: Մի՞թե հնարավոր է հավատալ Աստծուն, բայց չհավատալ հավիտենական կյանքի գոյությանը:

- Այս կերպ մտածող մարդիկ ոչ թե հավատում են Աստծուն, այլ հավատում են, որ Աստված կա: Հավատալ Աստծուն նշանակում է ընդունել Նրա պատգամները, սուրբգրային ճշմարտությունները: Քրիստոս ասաց. «Ես իսկ եմ հարությունն եւ կյանքը. ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի, եւ ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. ԺԱ 25-26): Նա հարություն առավ մեռելներից եւ եղավ անչեջելաների առաջին պտուղը (տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 20): Դա լավագույն ապացույցն է մեր հարության: Համընդհանուր հարության ժամանակ ոմանք հարություն կառնեն հավիտենական երանության համար, ոմանք էլ՝ հավիտենական դատապարտության, տանջանքների համար (տե՛ս Հովհ. Ե 29): Մեր Տերը եկավ եւ մեզ պատմեց այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար. «Ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ նա, որ իջավ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքից էր» (Հովհ. Գ 13): Պողոս առաքյալն էլ երկնքի արքայության ականտեսը եղավ դեռ իր կենդանության ժամանակ, որի մասին պատմում է երրորդ դեմքով. «Գիտեմ մի մարդու...., որ հափշտակվեց մինչեւ դրախտ եւ լսեց անպատում խոսքեր, որ մարդս արտոնված չէ խոսել» (Բ Կորնթ. ԺԲ 2-4): Նա կարծես հրաժարվում է մարդկային լեզվով նկարագրել իր տեսածը: Մարդը չի կարող երկնայինը, աստվածայինը հասկանալ, եթե Աստված իմաստություն չտա: Սիրաքն իր իմաստության գրքում ասում է, որ մարդն իր ոտքի տակ ընկածը հազիվ է նշմարում, ինչպե՞ս կարող է երկնայինը, աստվածայինը հասկանալ առանց Աստծու օգնության:

- Տե՛ր հայր, իսկ ինչի՞ համար է մարդուն տրված այս ժամանակավոր, անցողիկ կյանքը: Կարո՞ղ ենք ասել, որ մենք ծնված ենք ոչ այնքան այս կյանքի, որքան հավիտենականի համար:

- Միանշանակ պետք է պնդել այդ: Այս կյանքը նախապատրաստության համար է տրված մեզ: Երանելի՜ են նրանք, ովքեր այս կյանքում կնախապատրաստվեն հավիտենական կյանքի համար, բայց վա՛յ նրանց, ովքեր անպատրաստ կգտնվեն Տիրոջ երկրորդ գալստյանը՝ անեղ դատաստանի օրը: Նրանք կնետվեն «արտաքին խավարը. այնտեղ կլինի լաց եւ ատամների կրճտում» (Մատթ. ԻԵ 30): «Նրանց որոշ լի մեռնում, եւ հուրը չի հանգչում. եւ խայտառակություն կլինի բոլոր մարմնավորների համար» (հմմտ. Ե-սայի ԿՁ 24): Այդժամ բոլոր մեղավորները մահը պիտի փնտրեն եւ չպիտի գտնեն: Մարդն անմահ արարած է, ունի սկիզբ, բայց վերջ չունի: Մարդն ունի անմահ հոգի, բանականություն, զգացմունքներ, միտք. այս ամենը չի կարող կորչել, ուստի հարությամբ մարդու անմահ հոգին կմիանա հարուցյալ անապական, հոգեւոր մարմնին, ինչպես առաքյալն է ասում. (տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 1-58):

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մեր հյուրն է Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Կյուրեղ քհն. ՍԱԼՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 5

Իսկ երբ Անիի ամիրա Մանուչեհի մահից հետո նրա կնամարդի որդի Աբուլվարը փորձեց Անիի վաճառել Կարսի ամիրային, զայրացած անեցիները, որոնք կատաղած էին՝ իրենց եկեղեցու վրա մեծ կիսալուսին ամրացնելու համար, օգնեցին Հավթիկ գրավելու քաղաքը: Աբուլվարը եւ նրա որդիները գերի տարվեցին Վրաստան, իսկ Անին հանձնվեց Աբուլեր եւ Իվանե Օրբելիների կառավարմանը: Քանի դեռ կենդանի էր Հավթիքը, շրջակա մահմեդական ամիրությունները մի տեսակ հաշտվել էին ստեղծված կացության հետ, սակայն նրա մահից հետո, երբ գահ բարձրացավ նրա որդի Դեմետրը, երբ այլազգիները համոզվեցին, որ այլեւս չկա Հավթիք Շիկնարարի հզոր բռունցքը, Աբուլվար ամիրայի՝ Խորասանում գտնվող եւ գերության չտարված Փաթլուն անունով որդին իսլամական իշխանությունների օգնությամբ մեծ բանակ ժողովեց՝ Անին նորից գրավելու համար: Աբուլեր Օրբելիան սկզբում կազմակերպեց Անիի պաշտպանությունը, որի ժամանակ խիզախությամբ փայլեց քաղաքի հայությունը, անգամ կանայք պարիսպների վրա, եւ պատնեշի պարիսպների պաշտպանությունը պահպանել է նրանցից մեկի՝ Այծեմնիկի անունը, սակայն փրկելու համար իր եւ իր որդու կյանքը՝ նա Անին հանձնեց Փաթլունին: Մի որոշ ժամանակ Փաթլունը խաղաղություն հաստատեց քաղաքում, սակայն պատմությունը, սակայն պատմությունը շուտով կրկնվեց, երբ նա փորձեց նոր շուտով կրկնվեց, երբ նա փորձեց Անիի կաթողիկեի վրա կիսալուսինը վերահաստատել: Ջերսալուսինը վերահաստատել: Ջերբակալվեց ու բանտարկվեց Գրիգոր փակակալը: Եվ երբ կանմեռավ գոր փակակալը: Եվ երբ կանմեռավ էր կողոպտել եկեղեցին, ասսվաբանը ոչ ոք չի ասեցրեց Փաթլունին ոչ ոք չի ասեցրեց Փաթլունին ձակեց: Այսուհանդերձ Փաթլունին հաջողվեց վրաշիներից ետ գրավել Գանձակն ու Գվինը, սակայն նրան բախտ չվիճակվեց վայելելու ընդարձակված իշխանությունը: Շուտով նա սպանվեց, եւ նրան փոխարինեց նրա եղբայր Խուչչերը, իսկ շատ չանցած՝ մյուս եղբայր Մահմուդը, եւ վիճակն Անիում կրկին վատթարացավ՝ առաջ բերելով նոր գաղթականություն դեպի Անի:

Հակառակ բուն Հայաստանի, որտեղ հայությունը ծանր օրեր էր ապրում, Կիլիկիայում գնալով ուժեղանում էր Թորոս Ռուբինյանի իշխանությունը: 1107 թվին Թորոսը հարձակման ենթարկվեց սելջուկյան հրոսակ զորաջոկատների կողմից, որոնք Աճարպաթի կողմից մտան նրա իշխանություն եւ ավարի առան այն: Հետո բշնամին մուտք գործեց Գող Վասիլի իշխանություն, սակայն Մարաշի դաշտում ծանր պատրանքի կրեց Գող Վասիլի զորքերից, որոնց միացել էին Թորոսի զորամասերը: Թշնամին մեծ կորուստ ունեցավ, իսկ ավարն ու գերիները ետ խլվեցին: Այդ նույն եւ հաջորդ տարիներին բշնամին փորձեց գնեփնեցիր լինել պարտության համար, սակայն կրկին ծանր պատրանքի կրեց Հարսանմուրի կամ Հիսնմանսուրի ճակատամարտում, որտեղ հատկապես աչքի ընկավ Գող Վասիլի զորավարներ Աբլասաթ Տարոնցին, Վասիլի թեռի Պետրոսը, Վասիլ Կամսարական Տղան եւ Տիգրանը: Հարսան-մուրի ճակատամարտը եղավ 1108 թվի հունիսի վերջերին:

Եվ մինչ հայերը կռվում էին թշնամու դեմ, լատին իշխանները հանդես եկան որպես այլազգիների անուղղակի դաշնակից՝ պատերազմելով միմյանց դեմ: Ուռհայի Բոլդվին եւ Թելպաշարի Ջոսլին կոմսերը հարձակվեցին Անտիոքի դուքս Տանկրեդի վրա: Նրանց հետ էին Գող Վասիլի 800 զինվորներ, որոնք եկել էին հիշյալ լատին իշխանավորների օգնելու՝ իբրեւ թե այլազգիների դեմ պատերազմելու նպատակով: Սակայն ձեռնարկը ձախողվեց, եւ Տանկրեդը հաղթեց: Դրա վրա զայրացած Բոլդվինը սկսեց հալածել հայերին եւ տեղական մյուս բրիստոնյաներին, իսկ Աբլասաթ Տարոնցին, որն ինչ-ինչ պատճառներով հեռացել էր Գող Վասիլից, չհանդուրժելով ֆրանկ իշխանի կատաղածը, վերստին միացավ Գող Վասիլին՝ այդ ընթացքում վերք ստանալով բազկին: Թորոսի իշխանությունը հարձակում կրեց այլազգիներից 1110 թվին, սակայն հայոց իշխանը, տեսնելով բշնամու բազմաթվությունը, ստիպված եղավ հաշտվել իր իշխանության բշնամու կողմից ավարառվելու հետ, քանի որ Գող Վասիլն էլ նրան օգնելու հնարավորություն չուներ: Կարծես աստվածային օգնությամբ թշնամու հրոսակներն իրենց հարձակումներն ուղղեցին այլ կողմեր, եւ Թորոս իշխանը դադար ստացավ վերակազմելու իր իշխանության տնտեսությունը եւ բուժելու պատերազմի վերքերը: Չի բացառվում, որ այդ շրջանում Թորոսի իշխանության ժամանակ լինի Բարսեղ կաթողիկոսը:

Շարունակելի



ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՅԻ

(1081 - 1105-1113)

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Սկիզբը՝ էջ 7

- «Երկնքի արքայությունը ձեր ներսում է»,- մի առիթով ասաց Տերը: Ինչպե՞ս հասկանալ:

- Տեր Աստված վերստին ծնեց մեզ եկեղեցու ավազանից՝ որպես երկնքի արքայության քաղաքացիներ, Հոր որդեգիրներ, քրիստոնյաներ. դա մեր ներսում է: «Հայր մեր» աղոթքում էլ ասում ենք. «Թող Քո արքայությունը գա»: Որտե՞ղ. իհարկե՛ մեր մեջ: Աստծու թագավորությունն այն վայրն է, որտեղ մշտապես գործում է Աստծու կամքը: Եկեղեցին Աստծու արքայության «դեսպանատունն» է երկրի վրա: Աստծու արքայությունը մեր ներսում խաղաղությունն է, սերը, խնդությունը, ուրախությունը, այն բոլոր հատկանիշները, որոնք առկա են Աստծու արքայության մեջ, որոնք կվայելենք, եթե արժանանանք արքայությանը:

- Տե՛ր հայր, հավիտենական կյանքի հույսն ունենալով մեր սրտերում՝ նաեւ չենք հուսալքվում կյանքում մեզ հանդիպած նեղությունների, փորձությունների, տառապանքների ու վշտի պատճառով, մինչդեռ ովքեր չունեն փրկության հույսը, հավատ առ հավիտենական կյանք, վշտի, դժբախտության մեջ դեպի կործանում են գնում...

- Ցավալի իրողություն է փրկության հույս չունենալը, հավիտենական կյանքի գոյությանը չհավատալը: Պողոս առաքյալն ասում է. «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ» (Ա Կորնթ. ԺԵ 19): Ուստի ով չի հավատում հարությանը, հավիտենական կյանքին, ողորմելի վիճակում է գտնվում, ուստի եւ քրիստոնյա կոչվելու իրավունք չունի:

- Այսօր շատ հաճախ մոռանում ենք կամ պարզապես չենք կարեւորում մեր ննջեցյալների հոգիների փրկության համար աղոթել, մինչդեռ եկեղեցու հայրերը պատգամում են աղոթել թե՛ ծանոթ եւ թե՛ անծանոթ հանգուցյալների հոգիների փրկության համար՝ ասելով, որ եթե աղքատներն ու չքավորները կարիքն ունեն նյութական եւ հոգեւոր նեցուկի՝ ողորմության, որքան առավել պետք է նրանց ողորմել, ովքեր այլեւս չեն կարող ապաշխարել մեղքերի համար, այլ միայն մարդասեր եւ գթած Աստծու ողորմությունն են ակնկալում եւ կարոտում ողջերի աղոթքին: Մի՞թե այդքան կարեւոր է հավիտենական կյանքին արժանանալու համար մեր հանգուցյալների համար մեր աղոթքը:

- Շատ կարեւոր է, քանի որ այդպիսի աղոթքը, զուգորդված մեր հանգուցյալի անունից կատարվող ողորմությամբ, շատ բան կարող է փոխել: Հոգեհանգստյան արարողությունը նույնպես շատ կարեւոր է: Իհարկե, արմատական փոփոխություն չի կարող լինել նրա համար, ով իր ողջ կյանքի ընթացքում Աստծուց կտրված՝ հոգեւոր մահվան վիճակում է եղել, սակայն ինչ-որ փոփոխություն կարող է լինել: Ուստի շատ կարեւոր է հարատեւ աղոթքը մեր ննջեցյալների համար, որպեսզի Աստված արժանացնի նրանց արքայությանը, հավիտենական հանգստին:

- Տե՛ր հայր, հավիտենական կյանքը կամ երկնքի արքայությունը Սուրբ Գրքում Հիսուսը նմանեցնում է արտի մեջ թաքցրած գանձի. «Որ մի մարդ, գտնելով, նորից թաքցնում է եւ ուրախությունից գնում վաճառում է իր ամբողջ ունեցվածքը եւ այդ արտը գնում» (Մատթ. ԺԳ 44): Ուրեմն ինչպե՞ս փնտրել, գտնել եւ պահել այդ գանձերի գանձը, անհատնելի հարստությունը՝ հավիտենական կյանքը: Ինչպե՞ս արժանանալ երանական, բաղձալի եւ ցանկալի հավիտենական կյանքին:

- Սուրբ Գիրքը հստակ է ասում, որ հավիտենական կյանքին արժանանալու համար պետք է հավատալ մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին: Հավատալ Նրան նշանակում է գնալ Նրա հետեւից, լինել Նրա հետ, պահել Նրա պատվիրանները, փորձել իսկապես «նոր մարդ» դառնալ: Հիշենք, որ մեր այս ժամանակավոր կյանքն աստվածանալու մի ճանապարհ է: Արթնանանք անհավատության, հոգեւոր մահվան քնից, հավատանք հավիտենական կյանքի գոյությանը եւ մեր աստվածահաճո կյանքով արժանանանք դրան: Թող Աստված մեզ ողորմի եւ երկնքի արքայությանն արժանացնի:

Հյուրընկալեց
Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Նիկոլայ ԲԵՐԴՅԱԵՎ

ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 11

Անձնավորությունը անփոփոխն է փոփոխականում, միակերպությունը՝ բազմակերպության մեջ: Մեզ հավասարապես տհաճ է, երբ մարդու մեջ առկա է անփոփոխը, եւ չկա փոփոխականը, տհաճ է եւ հակառակը՝ երբ կա փոփոխականը, ու չկա անփոփոխը, երբ կա միակերպությունը, բայց չկա բազմակերպությունը, իսկ թե կա բազմակերպությունը, ապա՝ չկա միակերպությունը: Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում խախտվում է անձնավորության էական որակականությունը: Անձնավորությունը քարացած վիճակ չէ, այն փոփոխվում է, զարգանում, հարստանում, եւ դա միեւնույն սուբյեկտի, գոյի՝ ոնն այսինչի, զարգացումն է: Փոփոխությունը կատարվում է հենց հանուն այդ անփոփոխի, ինչպես իրավացիորեն ասում է Պուլենը, այդ գոյի: Անձնավորությունը բնավ պատրաստի տեղեկագիր չէ. այն առաջադրանք է, մարդու կատարելատիպը: Անձնավորությունը ինքնարարվող է: Ոչ մի մարդ չի կարող ասել, որ ինքը միանգամայն անձնավորություն է: Անձնավորությունը արժեբանության կատեգորիա է, գնահատման ենթակա: Այստեղ մենք գործ ունենք անձնավորության հիմնական պարադոքսի հետ: Անձնավորությունը պետք է իրեն ստեղծի, հարստացնի, լցնի ունիվերսալ բովանդակությամբ, իր կյանքի ողջ ընթացքում հասնի միասնության՝ ամբողջի մեջ: Սակայն դրա համար նա պետք է նախ գոյություն ունենա: Պետք է սկզբնապես լինի այդ սուբյեկտը, ով կոչված է իրեն արարելու: Անձնավորությունը ճանապարհի սկզբում է, եւ նա ճանապարհի վերջում է միայն:

Անձնավորությունը բաղկացած չէ մասերից. ագրեգատ չէ, գումարելի չէ, այլ նախագոյակ ամբողջություն է: Անձնավորության աճը, անձնավորության իրականացումը ամենեւին չի նշանակում ամբողջի կազմավորում մասերից, այլ սահմանում է անձնավորության ստեղծագործական փուլերը՝ որպես մեկ ամբողջի՝ ոչնչից չբխող, ոչնչով չգումարվող: Անձնավորության անխաթար կերպարն ամբողջականորեն ներկա է անձնավորության բոլոր փուլերում: Անձնավորությունը ունի եզակի, անկրկնելի կերպար, նա գեշտալտ է (գերմ.- անբողջություն, ձեւ - գեշտալտ-հոգեբանությունը ծագել է Գերմանիայում 1912 թ.: Գլխ. ներկայացուցիչներն են Մ. Վերթհայմերը, Վ. Քելերը, Կ. Կոֆկան): Այսպես կոչված գեշտալտոլոգիան տեսնում է նախագոյակի որակական ամբողջությունը, ձեւերը, որոնք առավել բարենպաստ են պերսոնալիզմի, քան թե հոգեբանության այլ ուղղությունների համար: Անձնավորության կերպարի որեւէ տարրալուծում չի նշանակում նրա խպառ անհետացում: Անձնավորությունը անհագ է: Անձնավորությունը իրեն արարում է եւ իրացնում իր ճակատագիրը՝ կեցության մեջ՝ հենց նրան գերազանցող զորության ակունքը գտնելով: Անձնավորությունը ներունակ ունիվերսալն է, սակայն անպայմանորեն տարբերվող, անկրկնելի, անփոխարինելի մի արարած՝ իր եզակի կերպարով: Անձնավորությունը բացառիկություն է եւ ոչ թե կանոն: Անձնավորության գոյության գաղտնիքը նրա բացարձակ անփոխարինելիության մեջ է, նրա եզակիության եւ բացառիկության, նրա անհամեմատելիության մեջ: Բոլոր անհատականություններն էլ անփոխարինելի են: Անհատական արարածի մեջ մշտապես անձնավորության պատկեր, մի այլ արարածի ճանաչելն անազնվություն է:

Անփոխարինելիությունը առկա է ոչ միայն մարդկանց պարագայում, այլեւ կենդանիների: Մի անձնավորությունը մեկ այլ անձնավորության հետ կարող է նմանության գծեր ունենալ, որոնք թույլ են տալիս համեմատելու: Սակայն այդ նմանության գծերը չեն կարող հարվածի տակ դնել անձնավորության այն բնորոշը, որը դարձնում է նրան անձնավորություն, ոչ թե ընդհանրապես անձնավորություն, այլ հենց այդ անձնավորությունը: Յուրաքանչյուր մարդկային անձնավորության մեջ կա ունիվերսում՝ ոչ որպես կյանքի որակական բովանդակության ստեղծագործական ձեռքբերման ներքին ունիվերսալ ընդհանրություն, այլ արտաքին՝ զոռով կպցված ունիվերսալայինը: Սակայն կոնկրետ, որոշակի անձնավորությունը գոյություն ունի ոչ թե իր ընդհանրական արտահայտությամբ, ասենք օրինակ, որ ունի երկու աչք, ինչպես բոլոր մարդիկ, այլ այդ աչքերի եզակի արտահայտությամբ: Մարդկային անձնավորության մեջ կա շատ տոհմական, պատմական, ավանդական, սոցիալական դասակարգային, ընտանեկան, ժառանգական եւ նմանակային, շատ «ընդհանուր», որն էլ հենց ոչ «սեփականն» է անձնավորության մեջ: «Սեփականը» յուրահատուկ է՝ կապված սկզբնաղբյուրի հետ, բնատուրը: Անձնավորությունը պետք է կատարի ինքնատիպ, յուրօրինակ ստեղծագործական ակտեր, եւ հենց դա է միայն նրան դարձնում անձնավորություն, դա կազմում նրա եզակի արժեքը: Անձնավորությունը պետք է լինի բացառիկություն, եւ նրա դեմ ոչ մի օրենք չկիրառենք: Խմբակային, դասային մասնագիտական խմբեր ներկայացնող մարդիկ կարող են լինել վառ անհատականություններ, բայց ոչ վառ անձնավորություններ: Անձնավորությունը մարդու մեջ հաղթանակն է՝ սոցիալական խմբերի դետերմինացիայի (փիլիսոփայական կոնցեպցիա- համընդհանուր, օրինաչափ կապի, բոլոր երեւույթների պատճառական պայմանավորվածության ուսմունք: Դ. հակադիրը ինդետերմինացիան՝ պատճառականության համընդհանուր բնույթի ժխտումն է) հանդեպ: Անձնավորությունը սուբստանցիա (մատերիա՝ իր ինքնազարգացման բոլոր ձեւերի, բնության ու պատմության բոլոր երեւույթների, այդ թվում՝ մարդու եւ նրա գիտակցության, ներքին միասնության գիտական ճանաչողության կատեգորիա) չէ, այլ ակտ, ստեղծագործական ակտ: Ուզածդ ակտ ստեղծագործական ակտ է, ոչ ստեղծագործականը պասիվություն է: Անձնավորությունը ակտիվություն է, հակադրություն, կյանքի դժվարությունների դեմ հաղթանակ, ազատության բերկրանք՝ աշխարհի ճորտության վրա: Անձնավորությունը եռանդ է ու պայքար, տիրապետումն իրեն ու աշխարհին, ճորտության հաղթահարումը, ազատագրումը: Անձնավորությունը բանական արարած է, եւ սակայն դա չի որոշվում գիտակցությամբ. նրան չի կարելի տարբերակել որպես բանականության կրող: Բանականությունն ինքնըստինքյան անձային չէ, այլ ունիվերսալ, ընդհանուր, անանձնական: Մարդու բարոյականբանական բնությունը, ըստ Կանտի, անանձնային է, ընդհանուր: Մարդու հունական ըմբռնումը՝ որպես բանական արարած, չի համընկնում անհատականացնող փիլիսոփայության հետ: Անձնավորությունը ոչ միայն բանական արարած է, այլեւ ազատ արարած է: Անձնավորությունն իմ ամբողջական մտածողությունն է, իմ ամբողջական կամքը, ամբողջական զգացողություններս ու ամբողջական ստեղծագործական գործողությունները: Հունական փիլիսոփայության եւ գերմանական իդեալոգիայի բանականությունը անդեմ բանականություն է, համընդհանուր բանականություն: Բայց կա եւ իմ անձնական բանականությունը, եւ մանավանդ՝ իմ անձնական կամքը: Պերսոնալիզմը (փիլիսոփայական հոսանք- անձնավորության ընդունումն իբրեւ առաջնային ռեալություն եւ բարձրագույն հոգեւոր արժեք) չի կարող հիմնավորվել իդեալիզմով (պլատոնական կամ էլ գերմանական) եւ չի կարող նաեւ հիմնավորվել բնապաշտությամբ, էվոլյուցիայի փիլիսոփայությամբ եւ կամ կյանքի փիլիսոփայությամբ, որը տարրալուծում է անձնավորությունը

Ե. Քոչար. Երկփեղկված անհատը

անդեմության մեջ, տիեզերական վիտալ (Վիտալիզմ- կենսաբանության մեջ ուսմունք, որը կենսագործունեության բոլոր պրոցեսները բացատրում է հատուկ աննյութական գործոնների ազդեցությամբ) պրոցեսներում: Մ. Շելերը ճշմարտացիորեն սահմանում է անձնավորության եւ օրգանիզմի, հոգեւոր արարածի եւ կենսական արարածի միջեւ եղած տարբերությունները:

Անձնավորությունը կենսաբանական եւ կամ հոգեբանական կատեգորիա չէ, այլ՝ բարոյական եւ հոգեւոր:

Շարունակելի

Թարգմանությունը՝
Գոհար ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
ք. Վաղարշապատ, ՔԿ
հեռախոս՝
(0+231) 54510, 56780
Ստոր. տպագր. 3. 7. 2006 թ.
Տպաքանակը՝ 2500
Գինը՝ 50 դրամ